ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՏԹԷՈՍԻ ՄԿՐՏՉԵԱՆ

ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԸ ԵՒ ԻՐԱՆԸ

(պատմութիւն, գաղափարախօսութիւն, քաղաքականութիւն)

Է.00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»

մասնագիտութեամբ պատմական գիտութիւնների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախօսութեան

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախօսութեան թեման հաստատուել է Երեւանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	պատմական գիտութիւնների դոկտոր Խուդինեան Գեւորգ Սարգսի
Պաշտօնական ընդդիմախօսներ՝	ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտութիւնների դոկտոր Սաֆրաստեան Ռուբէն Արամի
	պատմական գիտութիւնների դոկտոր Մարուքեան Արմէն Ցոլակի
Առաջատար կազմակերպութիւն՝	Խաչատուր Աբովեանի անուան Հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախօսութեան պաշտպանութիւնը կայանալու է 2023 թ. մարտի 30-ին, ժամը 14:30-ին, Երեւանի պետական համալսարանի Պատմութեան ֆակուլտետում գործող ԲՈԿ-ի 069 «Համաշխարհային պատմութիւն» մասնագիտական խորհրդում (Հասցէ՝ 0025, Երեւան, Աբովեան փողոց, 52):

Ատենախօսութեանը կարելի է ծանօթանալ Երեւանի պետական համալսարանի Պատմութեան ֆակուլտետի գրադարան-ընթերցարանում:

Սեղմագիրն առաքուած է 2023 թ. փետրուարի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ պ.գ. թ. Սմբատ Յովհաննիսեան

Թեմայի արդիականութիւնը: Պանթիւրքիզմը որպէս մշակութային, տնտեսական եւ քաղաքական գետնի վրայ թիւրքալեզու ժողովուրդներին համախմբելու եւ հեռանկարում նրանց մէկ միասնական պետութեան մէջ միաւորելու նպատակ ունեցող գաղափարախօսութիւն եւ քաղաքական շարժում իր ձեւաւորման պահից սկսած՝ մշտապէս թիրախաւորել է Իրանը[1]: Դա իրականացուել է ինչպէս Իրանի տարածքում առկայ թիւրքախօս իրանցիների գործօնի վրայ ուղղակի ազդեցութեան, այնպէս էլ օսմանեան եւ հանրապետական Թուրքիայի, ցարական Ռուսաստանի եւ ԽՍՀՄ-ի, իսկ վերջին երեսուն տարիներին՝ նաեւ Ադրբեջանի Հանրապետութեան արտաքին միջամտութեան միջոցով: Իսկ որպէս արեւմտեան քաղաքականութեան գործիքակազմի մաս՝ պանթիւրքիզմը Իրանի դէմ օգտագործուել է Բրիտանական կայսրութեան, Միացեալ Նահանգների եւ աւելի ուշ՝ Իսրայէլի կողմից: Ներկայումս նոյնպէս պանթիւրքիզմը դրսեւորում է իր զարմանալի ճկունութիւնը՝ փորձելով տեղաւորուել ինչպէս Ռուսաստանի որոշակի շրջանակների առաջադրած եւրասիականութեան համադրոյթի, այնպէս էլ արեւմտեան ծրագրերի մէջ: Ուստի մեր տարածաշրջանի շուրջը ծաւալուող աշխարհաքաղաքական տեղաշարժերն է՛լ աւելի են ընդգծում Իրանի հանդէպ պանթիւրքիզմի քաղաքական նկրտումների համակողմանի ուսումնասիրութեան խնդրի **արդիականութիւնը**:

Քանի որ ԽՍՀՄ փլուզումից յետոյ անցած աւելի քան երեսուն տարիների ընթացքում պանթիւրքիզմը վերածուել է նաեւ Իրանի Իսլամական Հանրապետութեան թուլացման եւ մասնատման անմիջական գործիքի, ներկայումս խիստ կարեւոր է այն խորքային հակասութիւնների բարդ թնջուկի **գիտական ուսումնասիրութիւնը**, որը պարունակում է՝ քաղաքակրթական առումով անհամատեղելի երեւոյթները մէկտեղող «**պանթիւրքիզմը եւ Իրանը**» երկանդամ բանաձեւը: Քանզի որքան էլ արտաքին աջակցութիւն ունենան օտար միջավայրերում ներդրուող գաղափարախօսութիւններն ու քաղաքական շարժումները, դրանց յաջողութեան վճռական պայմանը մնում է որոշակի երկրում նրանց ծաւալման համար անհրաժեշտ ենթահողի առկայութիւնը: Ուստի Իրանի ինքնատիպ քաղաքակրթական միջավայրում պանթիւրքիզմի գաղափարախօսութեան ներդրման արդիւնքում առաջ եկող խոր հակասութիւնների (կոլլիզիաների) ուսումնասիրութիւնը պահանջում է պատմագիտութեան, քաղաքական մարդաբանութեան եւ մի շարք այլ գիտակարգերի տեսական եւ մեթոդաբանական մօտեցումների վրայ հիմնուած ամբողջական գիտական հայեացք: Դա աւելի քան արդիական առաջադրանք է Հայաստանում, Իրանում եւ արտասահմանում բնակուող հայ

[1] Նկատի ունենք շահական Պարսկաստանը, շահական Իրանը եւ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը:

գիտնականների համար, որովհետեւ Իրանի տարածքային ամբողջականութիւնը Հայաստանի Հանրապետութեան ազգային անվտանգութեան ապահովման առանցքային պայմաններից է: Ուստի մեր ատենախօսութեան **աւելի քան արդիական** թեմայի գիտական քննութիւնը պահանջում է անցեալն ուսումնասիրելու, ներկայ իրողութիւնները բացայայտելու, եւ անգամ՝ ապագան կանխատեսելու ունակութիւն:

Այս ամէնի համադրումը եւ դեռեւս չուսումնասիրուած փաստական հարուստ նիւթերի ներառումը, ապահովում է ատենախօսութեան **գիտական նորոյթն** իր ամբողջութեան մէջ, որովհետեւ մեզանում պանթիւրքիզմի եւ Իրանի խորքային անտագոնիզմի բացայայտման խնդիրը առաջին անգամ է բերուել համակարգուած ուսումնասիրութեան դաշտ: Հայաստանում պանթիւրքիզմի մասին հրապարակուած նախորդ ուսումնասիրութիւնները հիմնականում վերաբերւում են Օսմանեան կայսրութեան ու Թուրքիայի Հանրապետութեան, մասամբ նաեւ Ադրբեջանի Հանրապետութեան ցեղասպանական քաղաքականութեան պատմութեանը: Ներկայ ատենախօսութեան մէջ Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ Իրանի հանդէպ մեծ թափով ծաւալուող պանթիւրքական նկրտումները առաջին անգամ են համակողմանի գիտական ուսումնասիրութեան ենթարկւում: Գիտական նորոյթ է նաեւ հետեւեալ հիմնախնդիրների առաջադրումը կամ նորովի ուսումնասիրութիւնը.

Առաջին՝ Ռուսաստանի թիւրքական ժողովուրդների շրջանում լուսաւորութեան տարածման եւ աշխարհիկացման գործի առաջամարտիկների՝ Ի. Գասպրինսկու, Մ. Շահթախթինսկու եւ Հաջի Սեիդ Էֆենդի ու Ջելալ Ունիսզադէ եղբայրների կողմից կովկասեան թաթարների վերնախաւի իրանական ինքնութեան դէմ պայքարի եւ Հարաւային Կովկասում «Ադրբեջան» ու «ադրբեջանցիներ» հասկացութիւնները ներդնելու միջոցով՝ Իրանի Ատրպատականի հանդէպ յաւակնութիւնների սկզբնաւորման գործընթացի ուսումնասիրութիւնը:

Երկրորդ՝ պանթիւրքիզմի, պանիրանիզմի, եւ պանազերիզմի հայեցակարգերի համեմատական քննութիւնը եւ վերջինիս երկակի գործառոյթի բացայայտումը՝ ի նկատի ունենալով իրանական ելակէտ ունեցող պանազերիզմի գերակայութիւնը Իրանի Ատրպատականում:

Երրորդ՝ Իրանի Ատրպատական նահանգի թիւրքախօս բնակչութեան ինքնութեան հարցի համակարգուած քննութիւնը՝ դրա պատմական, լեզուական, տնտեսական, մշակութային եւ այլ բաղադրիչների հանգամանալի ուսումնասիրութեան միջոցով:

Չորրորդ՝ 1991-2021 թթ. Իրանում պանթիւրքական կազմակերպութիւնների ձեւաւորման գործընթացի, նրանց ընդյատակեայ գործունէութեան եւ գաղափարախօսութեան ուսումնասիրութիւնը:

Հինգերորդ՝ Իրանում գործող պանթիւրքական կազմակերպութիւնների հակահայկական նպատակների բացայայտումը եւ Արցախեան երկրորդ պատերազմում նրանց ունեցած դերակատարութեան լուսաբանումը:

Ուսումնասիրութեան նպատակն ու խնդիրները: Ներկայ ատենախօսութեան ուսումնասիրութեան զոյգ առարկաները՝ պանթիւրքիզմը եւ Իրանը գիտական հետազոտութեան դաշտ են ներբերւում պանթիւրքիզմի՝ որպէս որոշակի գաղափարախօսութեան եւ քաղաքական շարժման կողմից Իրանի թիրախաւորման յաջորդական հանգրուանների եւ դրանցից իւրաքանչիւրում որդեգրուած գաղափարական ուղենիշերի եւ քաղաքական գործիքակազմերի բացայայտման միջոցով: Իբրեւ ժամանակի մէջ փոփոխութեան ենթարկուող եւ արագօրէն աշխարհաքաղաքական միջավայրին յարմարուող քաղաքական շարժման՝ պանթիւրքիզմի եւ իր քաղաքակրթական առաքելութեան մէջ անփոփոխ երեւոյթի՝ Իրանի փոխադարձ յարաբերութիւնների քննութեան փորձ՝ մեր ուսումնասիրութեան առարկան հնարաւոր է համակողմանիօրէն դիտարկել միմեանց լրացնող երեք հարթութիւնների վրայ՝ որպէս պատմութիւն, գաղափարախօսութիւն եւ քաղաքականութիւն:

Տարբեր հարթութիւններում ծաւալուող նման գործընթացների ուսումնասիրութեան **նպատակը** հետեւեալ գիտական **խնդիրների** քննութիւնն է.

Առաջին՝ պանթիւրքիզմի՝ որպէս գաղափարախօսութեան եւ դրանից բխող քաղաքական շարժման եւ Իրանի անհաշտ դիմակայութեան հարուստ պատմութեան հիմքում առկայ հասկացութային համակարգի ճշգրտումը սկսած՝ «Իրան-Թուրան» նախնական հակադրամիասնութեան երկրորդ բաղադրիչի անուան իւրացումից եւ Իրանի Ատրպատականի՝ արաբական անուանումի սեփականումից մինչեւ «թիւրքեր» լեզուական ընդհանրութեան եւ «թուրքեր» էթնիկ անուան եւ վերջապէս՝ «ադրբեջանցիներ» եւ «Իրանի ազերիներ» հասկացութիւնների նոյնականացման փորձերը:

Երկրորդ՝ Ռուսական կայսրութեան տարածքում 19-րդ դարի երկրորդ կէսին սկիզբ առած թիւրքական ժողովուրդների ինքնագիտակցութեան արթնացման եւ ազգային ինքնութեան փնտրտուքի ընթացքում արձանագրուած լուսաւորութեան տարածման ու աշխարհիկացման միտումների՝ ցարական իշխանութիւնների կողմից ուղղորդման արդիւնքում կովկասեան թաթարների վերնախաւի իրանական ինքնութեան խարխլման հետեւողական ջանքերի քննութիւնը՝ ի նկատի ունենալով հետագայում դրանք Իրանի Ատրպատական տեղափոխելու նպատակադրումը:

Երրորդ՝ պանթիւրքիզմի տեսաբանների՝ Իրանի հանդէպ թշնամական վերաբերմունքի ձեւաւորման գործընթացի բացայայտումը՝ ի նկատի ունենալով թիւրքական ժողովուրդների միասնութեան եւ Մեծ Թուրանի մասին սկզբնական անորոշ երազանքները Առաջին աշխարհամարտի նախօրէին

պանթիւրքիզմի համակարգուած գաղափարախօսութեան վերածուելու իրողութիւնն՝ ի դէմս Զիյա Գէօքալփի տեսութեան:

Չորրորդ՝ պանթիւրքիզմի գաղափարաքաղաքական թափանցումների՝ Կովկասով միջնորդաւորուած հիմնական երթուղու քննութիւնը եւ Իրանի Ատրպատականի անմիջական զաւթմանն ու էթնիկ դիմագծի խաթարմանն ուղղուած Օսմանեան կայսրութեան 1914 եւ 1918 թուականների ցեղասպանական գործողութիւնների հետեւանքների ուսումնասիրութիւնը:

Հինգերորդ՝ 1920-1930-ականներին պանթիւրքիզմի Իրան թափանցելու փորձերին հակադրուած՝ պանիրանիզմի համադրոյթի էութեան եւ դրանց դիմակայութեան արանքում աստիճանաբար բիւրեղացած պանազերիզմի երկակի բնոյթի բացայայտումն ու ներկայացումը:

Վեցերորդ՝ պանթիւրքիզմի, պանիրանիզմի եւ պանազերիզմի համադրոյթների օգտագործման նպատակով Երկրորդ աշխարհամարտի նախօրէին եւ պատերազմի ընթացքում ֆաշիստական Գերմանիայի եւ ԽՍՀՄ-ի գործադրած հետեւողական քայլերի, իսկ յետպատերազմեան շրջանում՝ Ատրպատականի զաւթման ստալինեան փորձի ու նրա ձախողման պատճառների բացայայտումը:

Եօթերորդ՝ Երկրորդ աշխարհամարտի նախօրէին արձանագրուած պանթիւրքիզմի հետագայ ֆաշիզացման գործընթացի ուսումնասիրութիւնը՝ Նիհալ Աթսիզի տեսական ժառանգութիւնից մինչեւ Ալփարսլան Թիւրքէշի ստեղծած «Ազգայնական շարժում կուսակցութիւնը» (1969), որի մարտական թեւի՝ «Գորշ գայլերի» գաղափարախօսութիւնն են պատճէնել մեր օրերում Իրանի Ատրպատականի հանդէպ յաւակնութիւններ դրսեւորող պանթիւրքական կազմակերպութիւնները:

Ութերորդ՝ ԽՍՀՄ փլուզմամբ սկիզբ առած աշխարհաքաղաքական գործընթացների՝ Իրանի Ատրպատականի թիւրքախօս բնակչութեան ինքնութեան բիւրեղացման գործընթացի վրայ ուղղակի եւ անուղղակի ազդեցութեան արժէքային եւ աշխարհաքաղաքական ենթահողի քննութիւնը:

Իններորդ՝ 1991 թուականից յետոյ ու մանաւանդ՝ 21-րդ դարի սկզբներին Իրանի Ատրպատականը թիրախաւորած պանթիւրքական կազմակերպութիւնների լայն ցանցի ձեւաւորման գործընթացի քննութիւնը՝ նրանց կայքերի, արտասահմանում գործող գրասենեակների կատարած աշխատանքների, հրատարակութիւնների, եւ իհարկէ՝ Իրանի ներսում ձեւաւորած ընդյատակեայ կառոյցների ուսումնասիրութեան միջոցով:

Տասներորդ՝ այդ կազմակերպութիւններից եւ կուսակցութիւններից՝ «Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժումի»[2] (GAMOH), «Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի նոր շարժումի»[3] (YENIGAMOH), «Հարաւային

---

[2] حرکتِ بیداریِ ملّی آذربایجانِ جنوبی (گاموح) (Güney Azərbaycan Milli Oyanış Hərəkat)

[3] جنبشِ نو بیداریِ ملی آذربایجان جنوبی (ینی گاموح)(Yeni Güney Azərbaycan Milli Oyanış Hərəkat)

Ադրբեջանի անկախութիւն» կուսակցութեան[4] (GAİP) եւ այլոց միասնական պանթիւրքական գաղափարաբանութեան քննութիւնը եւ միմեանցից տարբերուող քաղաքական առաջնահերթութիւնների ու մարտավարութեան ուսումնասիրութիւնը՝ ի նկատի ունենալով Թուրքիայում ու Ադրբեջանում եւ արեւմտեան երկրներում նրանց ունեցած կապերի բարդ խճանկարը:

Տասնըմէկերորդ՝ ժամանակակից Ադրբեջանի եւ Թուրքիայի տարածքում գործող՝ Իրանն իբրեւ թիրախ ընտրած պանթիւրքական կազմակերպութիւնների ընդարձակ ցանցի բացայայտումը, որոնք ապահովում են Իրանում գտնուող իրենց գաղափարակիցների թիկունքը:

Տասներկուերորդ՝ վերջին տարիներին Իրանում գործող պանթիւրքական կազմակերպութիւնների մօտ Հայաստանի, հայութեան եւ մանաւանդ՝ Արցախի Հանրապետութեան հանդէպ թշնամանքի ու ատելութեան մեծացման պատճառների քննութիւնը եւ Արցախեան երկրորդ պատերազմում նրանց բացայայտ դերակատարութեան ուսումնասիրութիւնը:

Ատենախօսութեան թեմատիկ ու ժամանակագրական շրջանակները: Այս բոլոր գիտական խնդիրների ուսումնասիրութիւնը հնարաւոր է միայն ատենախօսութեան ժամանակագրական առումով լայն, բայց թեմատիկ առումով՝ բաւականին նեղ ու յստակ շրջանակների համադրութեան միջոցով: Ժամանակագրական առումով պանթիւրքիզմի, իբրեւ գաղափարախօսութեան եւ քաղաքական շարժման, մէկ դարից աւելի ձգուող պատմութեան քննութիւնը մեզ ամենեւին էլ չի խանգարել իւրաքանչիւր ժամանակային տիրոյթում միայն Իրանի հանդէպ նրա որդեգրած դիրքորոշումների եւ ձեռնարկած քայլերի ուսումնասիրութեան գործում: Դրանք հանդէս են եկել առանձին անհատների տեսական-գաղափարական որոնումների, Իրանի հանդէպ քաղաքական դիրքորոշումների, եւ իհարկէ՝ Իրանի ներսում իրենց կազմակերպական ցանցերը ձեւաւորած՝ ընդյատակեայ պանթիւրքական կառոյցների գործունէութեան տեսքով: Դա է պատճառը որ ատենախօսութեան սկզբում ներկայացուել է պանթիւրքիզմի առաջացման համառօտ պատմութիւնը եւ նրա զարգացման հոլովոյթը, որից յետոյ՝ գաղափարախօսութիւնը եւ պանթիւրքիստ գործիչների եւ գաղտնի կազմակերպութիւնների Իրանի հանդէպ որդեգրած քաղաքականութիւնը: Քանի որ դա վերաբերում է նաեւ Իրանի Իսլամական Հանրապետութիւնում պանթիւրքիզմի գաղափարների տարածումը քաղաքական լայն շարժման վերածելու վերջին փորձերին, աւելի մանրամասնօրէն է ուսումնասիրուել այդ կազմակերպութիւնների 20-րդ դարի վերջերի ու մանաւանդ՝ 21-րդ դարի սկզբների գործունէութիւնը:

Ատենախօսութեան գիտական մեթոդաբանութիւնը: Նկատի ունենալով, որ ներկայ ուսումնասիրութեան նպատակը միանգամից երեք հարթութիւններում (պատմութիւն, գաղափարախօսութիւն եւ

[4] حزب استقلال آذربایجان جنوبی (گایپ) (Guney Azərbaycan İstiqlal Partisi)

քաղաքականութիւն) ծաւալուած բարդ գործընթացների քննութիւնն է, ատենախօսութեան առանձին բաժիններում երբեմն կիրառել ենք տարբեր գիտակարգերին բնորոշ ուսումնասիրութեան մեթոդները: Բայց քանի որ ատենախօսութեան շարադրանքի հիմքն այնուամենայնիւ կազմում է պատմութիւնը, նեղ՝ գաղափարախօսական հարցերի, իսկ երբեմն էլ վերլուծութիւնների պատմականութիւնը չխաթարելու համար հիմնականում առաջնորդուել ենք պատմագիտութեան համար կարեւոր նշանակութիւն ունեցող՝ **պատմահամեմատական մեթոդով**: Ընդ որում հետազոտութեան հիմնական մասն իրականացնելով տարաժամանակեայ քննութեան միջոցով, առանձին բաժիններում, որոնք վերաբերում են գաղափարախօսական եւ ինքնութենական հարցերին, անցել ենք համաժամանակեայ (սինքրոնիկ) վերլուծութեանը: Աւելի ճշգրիտ եւ հաւաստի տեղեկութիւններ ունենալու նպատակով այստեղ յատուկ ուշադրութիւն է դարձուել արխիւային փաստաթղթերի, հրատարակուած սկզբնաղբիւրների, կազմակերպութիւնների ծրագրերի եւ կանոնագրերի, նրանց ղեկավարների մտքերի, մամուլի նիւթերի, յուշագրութիւնների համադրական վերլուծութեան վրայ: Ըստ այդմ՝ ազերիների ինքնութեան հարցը քննութեան է ենթարկուել քաղաքական մարդաբանութեան, իսկ Իրան-Ադրբեջան միջպետական յարաբերութիւնները՝ միջազգային յարաբերութիւնների եւ աշխարհաքաղաքականութեան տեսանկիւնից:

Ատենախօսութեան կիրառական նշանակութիւնը: Նկատի ունենալով Արցախեան 44-օրեայ պատերազմից յետոյ Իրանում գործող պանթիւրքական կազմակերպութիւնների աննախադէպ աշխուժացման փաստը եւ նրանց միջոցով Թուրքիայի ու Ադրբեջանի հետագայ հակահիրանական ու հակահայկական ծրագրերի համակողմանի բացայայտման անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ ատենախօսութիւնում արծարծուած հարցերի սերտ կապը Հայաստանի Հանրապետութեան ազգային անվտանգութեան եւ Արցախեան գոյամարտի դիմագրաւած նորագոյն մարտահրաւէրների հետ, նրանում առկայ եզրակացութիւնները եւ հիմնականում՝ իրանական աղբիւրների վրայ հիմնուող հարուստ ու թարմ տեղեկատուութիւնը կարեւոր են ո՛չ միայն եւ ո՛չ այնքան մեր պատմագիտական եւ քաղաքագիտական շրջանակների, որքան միջազգային յարաբերութիւններում եւ ազգային անվտանգութեան հարցերում դերակատար ՀՀ պետական մարմինների համար:

Ատենախօսութեան փորձաքննութիւնը: Ատենախօսութեան հիմնական դրոյթները եւ եզրակացութիւնները ներկայացուել եւ մեկնաբանուել են հեղինակի կողմից հրատարակուած գիտական 1 մենագրութիւնում, 5 յօդուածներում եւ 1 թեզիսներում: Ատենախօսութեան թեման հաստատուել է ԵՊՀ Արեւելագիտութեան ֆակուլտետի գիտական խորհրդում:

Ատենախօսութիւնը քննարկուել եւ հրապարակային պաշտպանութեան է երաշխաւորուել ԵՊՀ Իրանագիտութեան ամբիոնի կողմից:

Հետազոտութեան աղբիւրագիտական հիմքը եւ թեմայի ուսումնասիրուածութեան աստիճանը: Օգտագործուած աղբիւրները կարելի է դասակարգել ըստ հետեւեալի՝ արխիւային փաստաթղթեր եւ նիւթեր, այդ թւում՝ Իրանի տարբեր նախարարութիւնների պաշտօնական փաստաթղթեր, պանթիւրքիզմի տեսաբանների աշխատութիւններ եւ յօդուածներ, մամուլ, համացանցային սկզբնաղբիւրներ, այդ թւում՝ պանթիւրքական կազմակերպութիւնների ծրագրեր, կանոնագրեր, պաշտօնական յայտարարութիւններ, անհատ պանթիւրքիստների հրապարակումներ, հարցազրոյցներ եւ ելոյթներ, համացանցային լրատուական աղբիւրներ:

Սոյն ատենախօսութեան շարադրանքում օգտագործել ենք իրանական, հայկական, թուրքական եւ ադրբեջանական ծագում ունեցող աղբիւրներ:

Ատենախօսութեան թեմայի ուսումնասիրութեան շրջանակում քննութեան են ենթարկուել Իրանի Իսլամական Հանրապետութեան արտաքին գործերի նախարարութիւնում առկայ վաւերագրերը, ինչպէս նաեւ մի շարք վիճակագրական տուեալներ: Մասնաւորապէս օգտագործել ենք Իրանի արտաքին գործերի նախարարութեան 1923 թուականի փաստաթղթերը[5], Աստարայում եւ Ուրմիայում եւ Սաւոջբոլաղ Մաքրիում[6] Իրանի արտաքին գործերի նախարարութեան յանձնակատարների ուղարկած զեկոյցները, Ստամբուլում Իրանի դեսպանութեան զեկոյցները[7] Իրանի արտաքին գործերի նախարարութեան, Ազգերի լիգայում Իրանի պատուիրակութեան նամակը Իրանի արտաքին գործերի նախարարութեան[8], Իրանի պատերազմի նախարարութեան[9], Բաքւում իրանական դպրոցի տնօրէնի զեկոյցները[10] Իրանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեանը, որոնք գտնւում են Իրանի ազգային արխիւում[11], եւ որոնք տեղ են գտել Քաւէ Բայաթի հրատարակած «Պանթիւրքիզմը եւ Իրանը»[12] ծաւալուն ժողովածուում: Նրա

---

5 (۱۳۰۲ ۱۵/۲۲) هئیات نمایندگی ایران در جامعه ملل، نمره ۲۱۸ ، ۱۱ محرم ۱۳۴۲ / ۱ سنبله ۱۳۰۲

6 (۱۳۰۲ ۱۵/۲۲) وزارت امورخارجه، کارگزاری ارومیه و ساوجبلاغ مکری، نمره ۱۶۲، ۲۱ سنبله ۱۳۰۲

7 (۱۳۰۲ ۱۵/۲۲) سفارت ایران در استانبول، نمره ۵۱۷، ۲۱ سنبله۱۳۰۲

8 (۱۳۰۲ ۱۵/۲۲)وزارت امور خارجه، استخراج مکتوب رمز استانبول، نمره ۲۸، ۲۶ اسد ۱۳۰۲،

9 (۱۳۰۲ ۱۵/۲۲)وزارت جنگ، نمره ۳۲۷۶، اول عقرب ۱۳۰۲

10 یدالله مایل تویسرکانی به وزارت معارف، نمره ۱۳، ۱۵ جوزا ۱۳۰۳ (سازمان اسناد ملی ایران، ۲۱۶۵)
گزارش مایل تویسرکانی به وزارت معارف، شماره ۱۹، ۳۰ اسد ۱۳۰۳ (ساما / م ۲۱۶۵)
[۴ قوس ۱۳۰۲] (ساما / م ۲۱۶۵) مایل تویسرکانی به وزارت معارف، نمره ۱، ۱۷ ربیع اثانی
مایل تویسرکانی به وزارت معارف، نمره ۴، ۲۴ جدی ۱۳۰۲ (ساما / م ۲۱۶۵)

11 سازمان اسناد ملی ایران

12 **کاوه بیات**، یان ترکیسم و ایران، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر و پژوهش شیرازه کتاب، تهران، ۲۴۷ صفحه

27-ից 94-րդ էջերը պետական արխիւային վաւերագրերի պատճէններ են եւ դրանց վերլուծութիւններ: Այդ փաստաթղթերում հիմնականում նկարագրւում են պանթիւրքական շրջանակների՝ Իրանի նկատմամբ կատարած գործողութիւնները, նրանց արտայայտութիւնները եւ հրատարակութիւնները, մէջբերում են կատարւում կամ զեկոյցներին կցւում են դրանց օրինակները եւ բնականաբար՝ խօսւում է նաեւ իրանական կողմի հակաքայլերի մասին:

Ուսումնասիրուել են նաեւ այլ պաշտօնական փաստաթղթեր եւ 19-րդ դարի վերջերի եւ 20-րդ դարի սկզբների Իրանում, Օսմանեան եւ Ռուսական կայսրութիւններում պարսկերէն, թուրքերէն, ադրբեջաներէն, հայերէն եւ անգլերէն հրատարակուած թերթերում առկայ փաստաթղթերի տպագիր օրինակները: Արժէքաւոր սկզբնաղբիւրներ են նաեւ Քաւէ Բայաթի գրքի յաւելուած բաժնում ներկայացուած Ստամբուլում, Բաքւում եւ Իրանում 1924-1925 թթ. հրատարակուած յօդուածների պատճէնները՝ Իրանի թիւրքախօս շրջանների վերաբերեալ թուրքերի եւ ազերիների տեսակէտների, իրանցիների պատասխանների, իրանցիների եւ թուրքերի տարբերութիւների եւ նմանատիպ հարցերի մասին:

Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում յայտնաբերել եւ ուսումնասիրել ենք Կովկասի մահմեդականներից բխող պանթիւրքական քարոզչութեան ազդեցութեամբ 1905 թուականին Ատրպատականում, մասնաւորապէս Թաւրիզում հայերի եւ ատրպատականցիների միջեւ տեղի ունեցած միջադէպերի վերաբերեալ նիւթերը[13]:

Հայաստանի ազգային արխիւում ուսումնասիրել ենք Հայաստանի առաջին Հանրապետութեան արտաքին գործերի նախարարութեան 1919 թուականին ստացած տարբեր զեկոյցները՝ Թիֆլիսի եւ Իրանի ներկայացուցչութիւններից, որոնցում նկարագրւում են համաշխարհային քաղաքական իրավիճակը եւ Թուրքիայի դերակատարութիւնը՝ պանթիւրքական ծրագրերն իրականացնելու ուղղութեամբ[14]:

Որպէս սկզբնաղբիւր օգտագործել ենք պանթիւրքիզմի տեսաբաններից Իւսուֆ Աղչուրայի 1904 թուականին հրատարակած «Քաղաքականութեան երեք ձեւ»[15] յօդուածը, Մոհամմեդ Ամին Ռասուլզադէի «Ադրբեջանի Հանրապետութիւն. ձեւաւորումը եւ ներկայիս իրավիճակը»[16] գիրքը, որը հրատարակուել է 1923 թ., Ստամբուլում:

---

[13] Մատենադարան, Նիւթեր ապագայ «պատմութեան», Կաթողիկոսական դիւան, Թղթապանակ 237գ, Վաւ. 257/1:

[14] Հայաստանի ազգային արխիւ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆոնդ 200, ցուցակ 2, գործ 51, թերթ 1, 7 եւ ՀԱԱ, ֆ. 275, ց. 7, գ. 2, թ. 4:

[15] **یوسف آقچورا**، سه طرز سیاست، ترجمه رسول عربخانی، تهران، پردیس دانش و شیرازه کتاب، ۱۳۸۹، ۱۱۷ صفحه

[16] **محمد امین رسول زاده**، جمهوری آذربایجان، چگونگی شکل گیری و وضعیت کنونی آن، ۱۹۲۳ میلادی، استانبول، برگردان تقی سلام زاده، تهران، نشر و پژوهش شیرازه، ۱۳۸۰، ۱۷۶صفحه

Սկզբնաղբիւրների շարքում յիշատակելի են մեր կողմից ուսումնասիրութեան ենթարկուած իրանական ծագում ունեցող կամ՝ Ադրբեջանի Հանրապետութիւնում գործող հետեւեալ պանթիւրքական կուսակցութիւնների ու կազմակերպութիւնների պաշտօնական կայքերը՝ «Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժում» (GAMOH)[17], «Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի նոր շարժում» (YeniGAMOH)[18], «Հարաւային Ադրբեջանի դեմոկրատական» կուսակցութիւն (GADP)[19], «Հարաւային Ադրբեջանի ազգային-ազատագրական ճակատ» (GAMAC)[20], «Հարաւային Ադրբեջանի անկախութիւն» կուսակցութիւն (GAIP)[21], «Ադրբեջանի ուսանողական շարժում» (AZOH)[22], «Նոր Մուսաւաթ» կուսակցութիւն (YMP)[23], «Ադրբեջանի դաշնային-դեմոկրատական շարժում» (FDMA)[24], «Ադրբեջանի դեմոկրատական միութիւն» (Birlik)[25], «Հարաւային Ադրբեջանի ուսանողական շարժում» (Oyrenci)[26], «Հարաւային Ադրբեջանի դեմոկրատական ազգային միաւորում»[27], «Ադրբեջանի ազգային դիմադրական» կազմակերպութիւն (AMDT)[28], «Աշխարհի ադրբեջանցիների համագումար» (DAK)[29], «Յանուն ազգային ինքնորոշման՝ ազգային ճնշման ենթակայ ազգերի միասնական ճակատ» (FNFSD)[30], «Իրանում ադրբեջանցիների մարդկային իրաւունքների պաշտպանութեան ընկերակցութիւն» (AHRAZ)[31], «Հարաւային Ադրբեջանի փրկութիւն» կուսակցութիւն (AGP)[32], «Ազգային ուղի կազմակեր-

---

[17] http://gamoh.org/ (21.03.2017): حرکتِ بیداریِ ملّی آذربایجانِ جنوبی (گاموح)

[18] http://www.yenigamoh.com/ (28.03.2017): جنبشِ نوِ بیداریِ ملّی آذربایجانِ جنوبی (ینی گاموح)

[19] http://www.gadp.org/fa/ (30.03.2017): حزبِ دمکراتیکِ آذربایجانِ جنوبی (گادپ)

[20] http://www.gamac.info/ (30.03.2017): جبهه آزادی ملی آذربایجان جنوبی (گاماج)

[21] http://www.gaip.org/ (17.03.2017) եւ https://gaip.biz (20.07.2020): حزبِ استقلالِ آذربایجانِ جنوبی (گایپ)

[22] http://www.azoh.net/ (30.03.2017): نهضتِ دانشجوئیِ آذربایجان (آزوح)

[23] http://www.musavat.az/(05.04.2017): حزبِ مساوات نوین

[24] http://www.achiq.org/ (30.03.2017): جنبشِ فدرال-دمکراتِ آذربایجان

[25] https://www.birlik.se/ (28.07.2020): اتحاد دمکراتیک آذربایجان (بیرلیک)

[26] https://www.oyrenci.org/ (05.04.2021): جنبش دانشجویی آذربایجان جنوبی

[27] http://oyrenci-sesi.info/site/xeber/8775 (30.03.2017): اتحادیه ملی دمکراتیک آذربایجان جنوبی

[28] http://diranish.org/ (03.04.2017): تشکیلات مقاومت ملی آذربایجان (دیرنیش)

[29] https://d-a-k.org/ (03.04.2017): کنگره آذربایجانی های جهان (داک)

[30] http://www.fnfsd.com/ (31.03.2017): جبههٔ مللِ تحتِ ستمِ ملّی برایِ حقِ تعیینِ سرنوشت (ایران)

[31] http://www.ahraz.org/ (12.04.2017): انجمن دفاع از حقوق بشر آذربایجانی های ایران (احراز)

[32]https://faryadjenob.wordpress.com/2012/12/13/%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86-%D8%AC%D9%86%D9%88%D8%A8%DB%8C-%D8%A8%D8%B1%D8%A7%DB%8C-%D8%B1%D9%81%D8%B1%D8%A7%D9%86%D8%AF%D9%88%D9%85-%D8%A7%D8%B3%D8%AA%D9%82%D9%84%D8%A7/ (15.12.2017): حزب نجات آذربایجان جنوبی

պութիւն»[33], «Հարաւային Ադրբեջանի լիբերալ-դեմոկրատական» կուսակցութիւն (GALDP)[34]:

Սոյն ատենախօսութեան թեման տասնամեակներ շարունակ եղել է **իրանական պատմագրութեան** ուշադրութեան կենտրոնում: Վերջին երկու տասնամեակում Իրանում հրատարակուել են բազմաթիւ գրքեր եւ գիտական յօդուածներ, գումարուել են գիտաժողովներ ու խորհրդաժողովներ՝ Իրանի էթնիկ խմբերի խնդիրների, ինքնութեան, պանթիւրքիզմի եւ պանազերիզմի, Ադրբեջանի եւ Թուրքիայի Հանրապետութիւնների ներքին եւ արտաքին քաղաքականութեան եւ Իրանի հետ նրանց փոխյարաբերութիւնների, Իրանում առկայ անջատողական հոսանքների մասին:

Իրանցի հեղինակներից խիստ շահեկան են Ահմադ Քասրաւիի, Էնայաթօլլահ Ռեզայի, Քաւէ Բայաթի, Համիդ Ահմադիի, Թուրաջ Աթաբակիի աշխատութիւնները:

Ահմադ Քասրաւին առաջիններից էր (1925 եւ 1940), որ խորքային ուսումնասիրութիւններ կատարեց Ատրպատականի պատմութեան, ատրպատականցիների ծագման եւ նրանց հնագոյն լեզուի՝ ազերիի մասին[35]:

Էնայաթօլլահ Ռեզան ուսումնասիրել է Առանի եւ Շիրուանի պատմութիւնը (1981), եւ 20-րդ դարում Ցարական Ռուսաստանի, Խորհրդային Միութեան, Օսմանեան կայսրութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան ծրագրերն ու նպատակները՝ Ադրբեջանի Հանրապետութեան ստեղծման եւ Իրանի թիւրքախօս շրջանների նկատմամբ նկրտումների տեսքով[36]:

Ատրպատականցիների ինքնութեան եւ իրանական ինքնութեան ամրապնդման մէջ նրանց դերակատարութեան, պանթիւրքիզմի եւ պանազերիզմի դէմ ատրպատականցի մտաւորականների պայքարի մասին լուրջ աշխատութիւններ են իրանցի հետազոտողներ Համիդ Ահմադիի[37] (2004 եւ 2009), Ալի Մոռշեդիզադի[38] (2001) եւ Ռահիմ Նիքբախտի[39]

---

[33] Նոյն տեղում: سازمان راه ملّی

[34] Նոյն տեղում: حزب لیبرال - دمکراتیک آذربایجان جنوبی

[35] **احمد کسروی**، تاریخ هیجده سالهٔ آذربایجان، دو جلد، جلد دوّم، چاپ نهم، تهران، انتشارات امیر کبیر، سال ۲۵۳۷، ۹۱۹ صفحه

եւ

احمد کسروی، آذری یا زبان باستان آذربایجان، سال ۱۳۹۰ (چاپ اول 1304 شمسی)، نشر هزار کرمان، تهران، ۵۵ صفحه

[36] **عنایت الله رضا**، اران از دوران باستان تا آغاز عهد مغول، تهران، ۱۳۸۰، چاپ اول، مرکز چاپ و انتشارات وزارت امور خارجه، مرکز اسناد و تاریخ دیپلماسی، ۷۱۳ صفحه

[37] **حمید احمدی** ، بنیادهای هویت ملی ایرانی، تهران، پژوهشکده مطالعات فرهنگی و اجتماعی، تابستان ۱۳۸۸

եւ

حمید احمدی، ایران: هویت، ملیت، قومیت، مجموعهٔ مقالات، تهران، موسسهٔ تحقیقات و توسعهٔ علوم انسانی، ۱۳۸۳، چاپ دوم، ۵۵۲ صفحه

[38] **علی مرشدی زاد**، روشنفکران آذری و هویت ملی و قومی، نشر مرکز، تهران، سال ۱۳۸۰، چاپ اوّل، ۳۶۵ صفحه

աշխատութիւնները (2008), որոնք օգտագործուել են այս ատենախօսութեան մէջ:

Իրանական պատմագիտութեան մէջ առանձին խումբ են կազմում այն հեղինակների հրապարակումները, որոնք եղել են համայնավար (կոմունիստ) ու խորհրդայնամէտ եւ Իրանի «Թուդեհ» կուսակցութեան անդամ, իսկ հետագային տարբեր պատճառներով հեռացել են այդ գաղափարներից: Դրանցից յատկանշական են մեր ատենախօսութեան թեմայի վերաբերեալ գրուած Անուար Խամէիի[40] (2002), Էնայաթօլլահ Ռեզայի[41] (2002), Թաղի Առանիի[42] (1924), Բաբակ Ամիրխոսրաւիի[43] (2013) յօդուածները:

Հայ հետազոտողներից թեմային առաջինն անդրադարձել է Զարեւանդը (Զարեհ Նալբանդեան) 1923 թ. հրատարակուած իր «Միացեալ, անկախ Թուրանիա»[44] եզակի աշխատութեամբ, որը թէեւ դասական առումով գիտական աշխատութիւն չէ, սակայն պարունակում է խորքային տեղեկութիւններ: Գիրքը թարգմանուել է պարսկերէն եւ իրանցի հետազոտողները լայնօրէն օգտագործում են այն:

Խորհրդային շրջանի հայ հետազոտողները պանթիւրքիզմը ուսումնասիրել են հիմնականում՝ հայ-թուրքական յարաբերութիւնների եւ Հայոց ցեղասպանութեան պատմութեան քննութեան դիտանկիւնից: Յետխորհրդային շրջանում Հայոց ազգային գաղափարախօսութեան ընդհանուր ուրուագծման եւ պանթիւրքիզմի հետ նրա հակադրութեան քննութեան առումով արժէքաւոր է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լ. Խուրշուդեանի «Հայոց ազգային գաղափարախօսութիւնը»[45] աշխատութիւնը:

Թուրքիայի՝ որպէս ցեղասպան պետութեան յաջորդական իշխանութիւնների ծաւալապաշտական նպատակների մէջ առկայ յստակ ժառանգորդականութիւնը եւ դրանցում՝ պանթիւրքիզմի՝ որպէս գաղափարախօսութեան եւ քաղաքական շարժման ունեցած դերակատարութիւնը հիմնարար քննութեան են ենթարկուել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբէն Սաֆրաստեանի «Օսմանեան կայսրութիւն.

---

[39] **رحیم نیکبخت**، نقش آذربایجان در تحکیم هویت ایران، سال ۱۳۸۷، چاپ اول، تهران، وزارت علوم، تحقیقات و فناوری، معاونت فرهنگی، دفتر برنامه ریزی اجتماعی و مطالعات فرهنگی و دانشگاه پیام نور، مرکز نقده، ۵۷۶ صفحه

[40] **انور خامه ای**، پان ترکیسم و ارزش علمی و تاریخی آن، مجله اطلاعات سیاسی-اقتصادی، سال هفدهم، شمارهٔ ۱۸۲-۱۸۱ ، مهر و آبان ۱۳۸۱، تهران، صفحهٔ ۴۳-۳۶

[41] **عنایت الله رضا**، چگونه نام آذربایجان بر اران نهاده شد؟، ، مجله اطلاعات سیاسی-اقتصادی، سال هفدهم، شمارهٔ ۱۸۲-۱۸۱ ، مهر و آبان ۱۳۸۱، تهران، صفحهٔ ۲۵-۴

[42] **تقی ارانی**، آذربایجان یا یک مساله حیاتی و مماتی در ایران، مقاله، سال ۱۹۲۴، مجلهٔ فرنگستان برلین

[43] **بابک امیر خسروی**، آذربایجان در گلوی ایران گیر کرد؟، وبگاه تاریخ ایرانی، مصاحبه، ۴ اردیبهشت ۱۳۹۲

[44] **Զարեւանդ**, Միացեալ, անկախ Թուրանիա, Աթէնք, 1988 թ., 172 էջ:

[45] **Խուրշուդեան Լ.**, Հայոց ազգային գաղափարախօսութիւնը, Երեւան, 1999, 283 էջ:

Յեղասպանութեան ծրագրի ծագումնաբանութիւնը (1876-1920)»[46] արժէքաւոր աշխատութեան մէջ:

Արդի հայ ուսումնասիրողների օգտաշատ գրքերից է նաեւ Ալեքսանդր Սաֆարեանի «Զիյա Գէօքալփը եւ «Թիւրքականութեան հիմունքները»[47] աշխատութիւնը, որտեղ մանրակրկիտ կերպով ներկայացուել են պանթիւրքիզմի տեսաբաններից Զիյա Գէօքալփի տեսակէտները:

Ատենախօսութեան գիտաթեմայի առանձին խնդիրների վերաբերեալ ուշագրաւ հրապարակումներ են արդի հայ արեւելագիտութեան եւ պատմագիտութեան ներկայացուցիչներ Գառնիկ Ասատրեանի[48], Գէորգ Խուդինեանի[49], Արմէն Մարուքեանի[50], Վարդան Գալստեանի[51] յօդուածները:

Յետխորհրդային շրջանում մեր ատենախօսութեան թեմայի վերաբերեալ հրապարակուած աշխատութիւններից արժէքաւոր է ռուսաստանցի հետազոտող Վ. Նադեին-Ռայեւսկու[52] ուսումնասիրութիւնը:

Ատրպատականցիների ինքնութեան ուսումնասիրութեան գործընթացում մեզ մեծապէս օգնել են ազգայնականութեան պատմութեան ու արդի վիճակի մասին արեւմտեան ու հայ տեսաբանների՝ Էնթոնի Սմիթի[53], Էդուարդ Յարութիւնեանի[54] եւ այլոց արժէքաւոր հարցադրումները:

Թեմայի առանձին հարցերի քննութեան առումով յոյժ կարեւոր են թուրք հետազոտող Ջենք Սարաչօղլուի՝ «Գորշ գայլերի» գաղափարաբանութեան ակունքների բացայայտմանը նուիրուած ուսումնասիրութիւնը[55], իսրայէլցի

---

[46] Տե՛ս **Սաֆրաստեան Ռ.**, Օսմանեան կայսրութիւն. ցեղասպանութեան ծրագրի ծագումնաբանութիւնը (1876-1920 թթ.) , Եր., «Լուսակն» հրատ., 2009, 247 էջ:

[47] Տե՛ս **Սաֆարեան Ա.,** Զիյա Գէօքալփը եւ Թիւրքականութեան հիմունքները, ԵՊՀ հրատարակչութիւն, Երեւան, 2012, 297 էջ:

[48] **Garnik Asatryan**, Armenia and Security Issues in the South Caucasus, The Quarterly Journal, Vol. 1, No. 3, September 2002.

[49] Տե՛ս **Գ.Խ. (Գէորգ Խուդինեան),** Թիւրքերը, թուրքերը եւ մենք, «Թիւրքական աշխարհ, Կովկաս եւ Իրան: Քաղաքակրթական փոխգործակցութեան խաչմերուկ» միջազգային գիտաժողովի մասին, «Վէմ» համահայկական հանդէս, թիւ 2(27), յուլիս-սեպտեմբեր 2009, էջ 118-124:

[50] Տե՛ս **Մարուքեան Ա.**, Թուրքիայի արիւնոտ ձեռքը Ղարաբաղում, Շուշիի ջարդերի 100-ամեակի կապակցութեամբ, «Վէմ» համահայկական հանդէս, 2020, N 2, էջ 235-250:

[51] Տե՛ս **Գալստեան Վ.Ա.**, Թիւրքախօսների էթնիկ ինքնագիտակցութեան վաղ դրսեւորումները, «Վէմ» համահայկական հանդէս, Թ (ԺԵ) տարի, թիվ 1 (57), յունուար-մարտ, 2017 էջ 193-206:

[52] Տե՛ս **Надеин-Раевский В.А**. Пантюркизм: идеология, история, политика. Экспансионистская доктрина: от Османской империи до наших дней и судьбы Турции, России и Армении. – М.: Издательство “Русская панорама”, 2017.

[53] **Anthony D. Smith**, Nationalism: Theory, Ideology, History, Second Edition, UK Polity Press, 2010, 209 p.

[54] **Յարութիւնեան Է.**, Ազգային ինքնութիւն. «Սերունդների աշխարհ» եւ «Ժամանակակիցների աշխարհ», «Բանբեր Երեւանի համալսարանի. Փիլիսոփայութիւն, հոգեբանութիւն», 2019, N 2 (29), էջ 3-15:

[55] **Cenk Saraçoğlu**, Nihal Atsiz’s World-View and Its Influences on the Shared Symbols, Rituals, Myths and Practices of the Ülkücü Movement, Turkology Update Leiden Project Working Papers Archive, Department of Turkish Studies, Universiteit Leiden, May 2004.

քաղաքագէտ Ջէյկոբ Լանդաուի պանթիւրքիստների գործունէութեան պատմութիւնը ժամանակագրական փուլերով՝ սկզբից մինչեւ 1970-ական թուականները շարադրելու ուշագրաւ փորձը[56], ինչպէս նաեւ կովկասեան թաթարների վերնախաւի իրանական ինքնութեան կերպափոխումներին նուիրուած Թադեուշ Սվետիխովսկու եւ Բրայան Քոլլինզի[57] աշխատութիւնը, որը հրատարակուել է ԱՄՆ-ում:

Ատենախօսութիւնը պատրաստելիս օգտագործուել են «Վէմ», «Բանբեր Երեւանի համալսարանի» գիտական հանդէսներում հրատարակուած յօդուածները: Պարսկերէն հանդէսներից նշենք Իրանի Իսլամական Հանրապետութեան խորհրդարանի հետազոտութիւնների կենտրոնի հանդէսը[58], Թեհրանի համալսարանի քաղաքագիտութեան եւ իրաւաբանութեան ֆակուլտետի «Կենտրոնական Եւրասիայի ուսումնասիրութիւններ» գիտական հանդէսը[59], Թեհրանի համալսարանի Աստուածաբանութեան եւ իսլամական գիտութիւնների ֆակուլտետի «Իսլամական քաղաքակրթութեան պատմութեան հետազոտութեան» հանդէսը[60], Իրանի աշխարհաքաղաքականութիւն ընկերակցութեան «Աշխարհաքաղաքականութիւն» եռամսեայ հանդէսը[61] եւ այլն:

Գիտական հանդէսներից բացի օգտագործուել են տպագիր կամ համացանցային լրատուամիջոցներում հրատարակուած յօդուածներ ու հարցազրոյցներ: Այդ լրատուամիջոցներից են՝ «Արօր» (Թիֆլիս), «Էթելաաթ է Սիասի-Էղթեսադի»[62] (Իրան), «The Guardian» (Բրիտանիա), «Մաջալեյէ ֆարհանգեստան է Բեռլին»[63] (Գերմանիա), «Yön Dergisi» (Անկարա), «Դոյչէ Վելէ»[64] (Գերմանիա), «Թառիխ է Իրանի»[65] (Իրան), «Այ Առ Դիփլոմասի»[66] (Իրան) եւ այլն:

Ատենախօսութեան կառուցուածքը: Ատենախօսութիւնը բաղկացած է **ներածութիւնից, երեք գլխից**՝ համապատասխան ենթագլուխներով, **եզրակացութիւններից, օգտագործուած գրականութեան ցանկից,**

---

[56] **Landau Jacob M.**, Pan-Turkism, From Irredentism to Cooperation, 1995, 2nd Edtition, Revised and updated, Printed in Hong Kong.

[57] **Swietochowski Tadeusz, Collins C. Brian,** Historical dictionary of Azerbaijan, USA: Scarecrow Press, 1999.

[58] فصلنامه مرکز پژوهش های مجلس شورای اسلامی

[59] دانشکده حقوق و علوم سیاسی دانشگاه تهران، مطالعات اوراسیای مرکزی

[60] دانشکده الهیات و معارف اسلامی دانشگاه تهران، پژوهشنامه تاریخ تمدن اسلامی

[61] انجمن ژئوپلیتیک ایران، فصلنامه ژئوپلیتک

[62] اطلاعات سیاسی-اقتصادی

[63] مجله فرهنگستان برلین

[64] https://www.dw.com/fa-ir/دویچه-وله-فارسی

[65] http://tarikhirani.ir/fa

[66] http://irdiplomacy.ir

յապաւումների ցուցակից, **Իրանը թիրախ ընտրած պանթիւրքական կազմակերպութիւնների անուանացանկից**:

Ներածութեան մէջ հիմնաւորւում է ատենախօսութեան թեմայի արդիականութիւնը, ներկայացւում են գիտական նորոյթը, նպատակները եւ խնդիրները, ուսումնասիրութեան թեմատիկ ու ժամանակագրական շրջանակները, կիրառուած գիտական մեթոդաբանութիւնը, աղբիւրների եւ գրականութեան տեսութիւնը:

Առաջին գլուխը՝ **ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ ԵՒ ԻՐԱՆ ԹԱՓԱՆՑԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ**, բաղկացած է հինգ ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ **Իրանի տարածքների եւ մշակոյթի իւրացումը թիւրքական ցեղերի եւ պետական կազմաւորումների կողմից մինչեւ պանթիւրքիզմի ձեւաւորումը**, շարադրանքը սկսելով «պանթիւրքիզմ» եզրոյթի սահմանումից՝ բացայայտուել են Կենտրոնական Ասիայի իրանական տարածք թիւրքական ցեղախմբերի ներթափանցումը, իրանական մշակոյթի իւրացման փորձերը եւ անգամ՝ պանթիւրքիստների կողմից ներկայումս գործածուող **հասկացութային համակարգի** իրանական ծագում ունենալու փաստը: Երկրորդ ենթագլխում՝ **Իրանի նկատմամբ քաղաքական յաւակնութիւնները՝ պանթիւրքիզմի ձեւաւորման նախնական հանգրուանում**, ապացուցւում է որ պանթիւրքիզմը որպէս գաղափարախօսութիւն ձեւաւորուել է լեզուական ընդհանրութիւններ ունեցող թիւրքական ժողովուրդների ծագման եւ մշակութային հոգեհարազատութեան մասին քննարկումները ո՛չ թէ նրանց համախմբմանը, այլ որոշակի տէրութեան՝ Ցարական Ռուսաստանի շահերին ծառայեցնելու համար: Ներկայացւում են պանթիւրքիզմի առաջին տեսաբանները Ռուսաստանում (Իսմայիլ բէյ Գասպրինսկի, Իւսուֆ Աղչուրա), ինչպէս նաեւ այդ գաղափարախօսութեան մէջ առկայ՝ Իրանի թիւրքախօս շրջանների նկատմամբ նախնական յաւակնութիւնները: Երրորդ ենթագլխում՝ **Պանթիւրքիզմի գաղափարաքաղաքական թափանցումները Կովկաս եւ Իրան 20-րդ դարի առաջին տասնամեակներին**, պաշտօնական փաստաթղթերի եւ Ստամբուլի, Բաքուի եւ իրանական մամուլի հիման վրայ ներկայացւում են երիտթուրքերի կառավարման շրջանում պանթիւրքական գաղափարների նոր համակարգման (Զիյա Գէօքալփ) եւ դրանք Իրանում տարածելու առաջին փորձերը: Ցոյց է տրւում, որ արդէն Ադրբեջանի Հանրապետութեան ստեղծման օրերին նրա պանթիւրքիստ պաշտօնեաները (Մոհամմեդ Ամին Ռասուլզադէ, Խոսրով բէյ Սուլթանով) Արցախի եւ Սիւնիքի հայութեան բնաջնջումը դիտարկում էին որպէս պարտադիր նախաքայլ՝ Իրանի Ատրպատականի զաւթմանն անցնելուց առաջ, եւ չէին էլ թաքցնում այդ մտադրութիւնը: Չորրորդ ենթագլխում՝ **Իրանի հակազդեցութիւնը պանթիւրքիզմին՝ 1920-1930-ական թուականներին եւ պանիրանիզմի համադրոյթը,** ներկայացւում է պանթիւրքական նկրտումների նկատմամբ Իրանի հակազդեցութիւնը՝ «մէկ ազգ, մէկ երկիր» գաղափարի իրականացումը

Ռեզա շահի կողմից եւ հանրային մակարդակով (մտաւորականութիւն, լրագրողներ, գիտական շրջանակներ)։ Բացայայտւում է այն իրողութիւնը, որ Ռեզա շահի գահակալութեամբ իրանական մշակոյթը, լեզուն եւ ընդհանրապէս՝ պարսիկ ժողովրդի ինքնութեան միւս բաղադրիչները դարձան համաիրանական ինքնութեան հետագայ ամրապնդման կռուանները։ Իսկ հինգերորդ ենթագլխում՝ **Պաիրանիզմի, պանթիւրքիզմի եւ պանազերիզմի հայեցակարգերի օգտագործումը ֆաշիստական Գերմանիայի եւ ԽՍՀՄ-ի կողմից՝ 1930-1940-ական թուականներին**, ցոյց է տրւում որ թէեւ քեմալականների օրոք Թուրքիայում պանթիւրքիզմն արտաքուստ քողարկուեց գիտական-ակադեմիական հետազոտութիւններով զբաղուող պատմաբանների եւ մշակութային գործունէութիւն ծաւալած մտաւորականների գաղափարական որոնումների շղարշի տակ, սակայն Գերմանիայում Հիտլերի իշխանութեան գալուց անմիջապէս յետոյ նրա մեծ երկրպագուն եւ «Գորշ գայլերի» շարժման գաղափարական հայրը՝ Հուսէյն Նիհալ Աթսիզը, գերմանական նացիստ Իւլիուս Շտրայխերի հետ կապուած Ռիֆաթ Աթիլխանի հետ միասին 1934 թուականին կազմակերպեց Արեւելեան Թրակիայի շուրջ 15 հազար հրեաների զանգուածային թալանն ու սպանութիւնները։ Հրապարակւում է նաեւ Նիհալ Աթսիզի՝ 1941 թ. մայիսին բանտից գրած նամակը՝ իր նորածին որդուն, որը փաստօրէն դարձաւ յետպատերազմեան շրջանում ձեւաւորուած «Գորշ գայլերի» շարժման իւրայատուկ մանիֆեստը։ Ցոյց է տրւում, որ այդ «նացիստ-թուրանիստներին» իր նպատակների համար օգտագործող թուրքական կառավարութիւնը 1944-ից նրանց դէմ սկսուած դատավարութիւնների միջոցով իրականացրեց իր արտաքին քաղաքականութեան նոր՝ հակահիտլերեան շրջադարձի բեմականացումը, որպէսզի Սառը պատերազմի սկսուելու հետ միասին նրանց միւս ականաւոր ներկայացուցչի՝ «Գորշ գայլերի» ապագայ առաջնորդ, գնդապետ Ալփարսլան Թիւրքէշի օգնութեամբ իրականացնի իր յաջորդ՝ հակախորհրդային շրջադարձը։

Մինչդեռ՝ 1941-ին խորհրդային զօրքերի մուտք գործելուց յետոյ ռազմակալուած Իրանում Խորհրդային Ադրբեջանի՝ կոմունիստական շղարշով քողարկուած պանթիւրքիստ առաջնորդների միջոցով «Հարաւային Ադրբեջանի ազատագրութեան» եւ անգամ՝ «երկու Ադրբեջանների միաւորման» կարգախօսները խաղարկելու ստալինեան փորձը շատ արագ ձախողուեց։ Հիմնուելով խորհրդային բանակի նախկին սպայ Էբրահիմ Նոռուզովի յուշերի վրայ՝ ատենախօսութեան մէջ բացայայտւում են 1944 թ. Ջուլֆա քաղաքում Միր Ջաֆար Բաղիրովի եւ Սէյէդ Ջաֆար Փիշեւարիի միջեւ բանակցութիւնների արդիւնքում սկիզբ առած այդ արկածախնդրութեան գաղտնի էջերը եւ նրա ձախողման պատճառները։

Երկրորդ գլուխը՝ **Պանթիւրքիզմը՝ Իրանի դէմ ուղղուած աշխարհաքաղաքական նկրտումների համածիրում (20-րդ դարի երկրորդ**

կէս - 21-րդ դարի սկիզբ) բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ **Պանթիւրքիզմի կերպարանափոխումները Թուրքիայի՝ արեւմտեան եւ Իրանի՝ հակաարեւմտեան դիմադարձումների համատեքստում (Սառը պատերազմից մինչեւ Խորհրդային Միութեան փլուզում)**, ցոյց է տրւում, որ համաշխարհային պատերազմի աւարտին իբրեւ «ֆաշիստ-թուրանիստներ» պիտակաւորուած եւ բանտերում յայտնուած Նիհալ Աթսիզը, Ալփարսլան Թիւրքէշը եւ միւս պանթիւրքիստ առաջնորդները 1947-ին արդարացուեցին Ռազմական վերաքննիչ դատարանի կողմից: Ալփարսլան Թիւրքէշը վերադարձաւ բանակային ծառայութեան եւ յայտնուեց ՆԱՏՕ-ի ընդհանուր պաշտպանական համակարգի մէջ: 1969 թուականին Ադանայում կայացած համագումարում Ալփարսլան Թիւրքէշը հիմնեց «Ազգայնական շարժում» կուսակցութիւնը, որն աւելի շատ յայտնի է իր մարտական թեւի՝ «Գորշ գայլեր» անուամբ: Նրա ծրագրային նպատակի՝ Թուրանական պետութեան ստեղծման համար Թիւրքէշն առաջարկում էր բազմացնել Թուրքիայի բնակչութիւնը՝ մինչեւ որ այն իր քանակով հաւասարուի ԽՍՀՄ-ի ազգաբնակչութեանը: Նոյն պատմաշրջանում Իրանում պանթիւրքական գաղափարները որեւէ յաջողութիւն չունեցան: Իսկ Իսլամական յեղափոխութեան յաղթանակից յետոյ յեղափոխութեան ճանաչուած առաջնորդներից մէկի՝ այաթոլլահ Մոհամմադ Քազեմ Շարիաթմադարիի գլխաւորութեամբ Ատրպատականում սկիզբ առած երկրամասի համար ինքնավարութիւն պահանջող չափաւոր շարժումն անգամ ճախողուեց:

Երկրորդ ենթագլխում՝ **Իրանի Ատրպատական նահանգի թիւրքախօս բնակչութեան ինքնութեան հարցի շուրջ,** քննութեան է ենթարկւում ընդհանրապէս իրանցիների եւ մասնաւորապէս Իրանի թիւրքախօսների ինքնութիւնը **ուղղահայեաց** (ժամանակային) եւ **հորիզոնական** (տարածական) իրար փոխլրացնող մակարդակներում եւ դրանց փոխկապակցուածութիւնները: Յստակօրէն ապացուցւում է, որ ազերիները կրում են իրանական ինքնութեան բոլոր տարրերը՝ աշխարհագրական սահմաններ, պատմութիւն, կրօն եւ դաւանանք, Իրանի պետական եւ քաղաքական համակարգում մշտական ներկայութիւն եւ առանցքային դերակատարութիւն, միաձուլում Իրանի տնտեսական համակարգում, մշակութային ժառանգութիւն եւ այլն, որոնք վկայութիւնն են այն բանի, որ ազերիները իրանական արմատներ ունեն եւ իրանցիներ են:

Երրորդ ենթագլխում՝ **Պանթիւրքիզմ եւ պանազերիզմ. տարբերութիւններն ու ընդհանրութիւնները**, ներկայացւում է այդ երկու հասկացութիւնների փոխկապակցուածութիւնը: **Իրանական մտածողութիւն** ունեցող պանազերիստները, յատկապէս Ատրպատականի ազերի մտաւորականները, բացայայտելով պանազերիզմի իրանական արմատները, այդ գաղափարական շարժումը հակադրում են **պանթիւրքական**

մտածողութիւն ունեցող եւ պանթիւրքիզմի նպատակները սպասարկող պանազերիստներին՝ Թաւրիզը գերակայ համարելով Բաքուի հանդէպ:

Չորրորդ ենթագլխում՝ **Իրանա-Ադրբեջանական յարաբերութիւնները 1991-2021 թուականներին եւ Իրանի ազերիախօս շրջանների հարցը**, ներկայացուում է Իրանի եւ արդէն Ադրբեջանի Հանրապետութեան փոխյարաբերութիւնները մինչեւ 2021 թուականը, այդ փոխյարաբերութիւնների վերիվայրումները եւ երկու երկրների միջեւ առկայ ձգողական եւ վանողական գործօնները:

Երրորդ գլուխը, որը սոյն ատենախօսութեան ամենակարեւոր գլուխն է՝ **Պանթիւրքական կազմակերպութիւնների ձեւաւորումն ու գործունէութիւնը Իրանում եւ նրա շուրջը (1991-2021)** բաղկացած է ութ ենթագլխից: Առաջին ենթագալխում՝ **Իրանական ծագում ունեցող պանթիւրքական կազմակերպութիւնների ընդհանուր բնութագիրը**, ուսումնասիրուել եւ ներկայացուել են այդ կազմակերպութիւնների ծրագրերը, կանոնագրերը, պաշտօնական յայտարարութիւնները եւ ղեկավարների մտքերը: Երկրորդ, երրորդ եւ չորրորդ ենթագլուխներում՝ **«Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժում» (GAMOH)**, **«Հարաւային Ադրբեջանի ազգային նոր զարթօնքի շարժում» (YENIGAMOH), «Հարաւային Ադրբեջանի անկախութիւն» կուսակցութիւն**, առանձնաբար եւ մանրամասնօրէն ներկայացուել են պանթիւրքական կազմակերպութիւններից երեքի ծրագրերը, կանոնագրերը, գործունէութիւնը: Հինգերորդ ենթագլխում՝ **Իրանական ծագում եւ արտասահմանում գրասենեակներ ունեցող այլ պանթիւրքական կուսակցութիւններ ու կազմակերպութիւններ**, ներկայացուել են պանթիւրքական այն կազմակերպութիւնները, որոնք գրասենեակներ ունեն եւ գործունէութիւն են ծաւալում Իրանից դուրս: Վեցերորդ ենթագլխում՝ **Իրանում գործող պանթիւրքական կազմակերպութիւնների ընդյատակեայ ու բացայայտ գործունէութեան ձեւերն ու եղանակները**, ներկայացուել են այդ կազմակերպութիւնների աշխատանքները Իրանում՝ գիտաժողովների կազմակերպումից մինչեւ մարզական միջոցառումների ժամանակ իրականացուող քաղաքական գործողութիւնները եւ այլն: Եօթերորդ ենթագլխում՝ **Իրանն իբրեւ թիրախ ընտրած պանթիւրքական կազմակերպութիւնները ժամանակակից Ադրբեջանում**, ներկայացուել են Ադրբեջանի Հանրապետութիւնում գործող այն կազմակերպութիւնները, որոնք հետապնդում են պանթիւրքական նպատակներ եւ տարածքային յաւակնութիւններ ունեն Իրանի նկատմամբ: Ի վերջոյ ութերորդ ենթագլխում՝ **Իրանում գործող պանթիւրքական կազմակերպութիւնների դերը Արցախեան երկրորդ պատերազմում**, ներկայացուում են այդ կազմակերպութիւնների թշնամական քայլերը Հայաստանի, Արցախի եւ հայութեան նկատմամբ եւ դրանց գործունէութիւնը Արցախեան 44 օրեայ պատերազմի ընթացքում:

Սոյն գլուխը ժամանակագրական առումով ընդգրկում է 1991 թուականից, այսինքն՝ ԽՍՀՄ փլուզումից եւ Ադրբեջանի Հանրապետութեան վերանկախացումից մինչեւ 2021 թուականը:

Եզրակացութիւններ բաժնում ներկայացուում են ատենախօսութեան շրջանակներում կատարուած հետազոտութեան արդիւնքները:

Ներկայ ատենախօսութեան ուսումնասիրութեան առարկան դարձած բազմաբնոյթ հիմնահարցերի քննական վերլուծութիւնը թոյլ է տալիս կատարել հետեւեալ **եզրակացութիւնները**:

1. Պանթիւրքիզմի գաղափարախօսութեան ձեւաւորման համար հիմք դարձած **հասկացութային համակարգի** ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ դրա հիմքում հիմնականում՝ Իրանական աշխարհը եւ Իրանի պատմութիւնն ու մշակոյթը բնորոշող հասկացութիւնների զաւթումներ ու իւրացումներ են: Ալթայից Կենտրոնական Ասիայում եւ ապա՝ Ատրպատականում, Արեւելեան Այսրկովկասում եւ Անատոլիայում հաստատուած բարբարոս ցեղերի կողմից նախ՝ իւրացուել են Կենտրոնական Ասիայի իրանական ծագում ունեցող եւ իրանական աշխարհը բնորոշող «**թուր**» էթնոնիմն ու «**Թուրան**» երկրանունը: Հետագայում այդ աւանդոյթը շարունակելով իրանական «**Ատրպատական**» (արաբերէն՝ أذربايجان) անուանման հետ կապուած, վերջինիս էթնիկ իմաստ հաղորդելու միջոցով՝ նրա աշխարհագրական սահմանները տարածել են դէպի հիւսիս՝ Առան ու Շիրուան: Իսկ ահա ներկայումս պանթիւրքիստները թուրքերէնում առկայ «**türk**» համընդհանուր հասկացութիւնը միաժամանակ՝ ե՛ւ **թիւրքեր** լեզուական ընդհանրութեան ե՛ւ **թուրքեր** էթնիկ անուան բնորոշումը դարձնելու միջոցով՝ «հիմքեր» են ստեղծում հակառակ ուղղութեամբ՝ դէպի իրենց իսկ յօրինած «Թուրանը» շարժուելու համար:

2. Պանթիւրքիզմը եւ ընդհանրապէս՝ «պան» հասկացութեամբ բնորոշուող ազգայնական գաղափարախօսութիւններն ու շարժումները ձեւաւորուել են նոր ժամանակներում եւ ծառայեցուել են լեզուական ընդհանրութեան օգտագործման միջոցով որոշակի մեծապետական նպատակների ուղղակի կամ միջնորդաւորուած հունաւորմանն ու իրականացմանը: Երկրորդ պարագայում դրանք յաճախ դարձել են ժողովուրդների ծագման եւ անգամ՝ մշակութային հոգեհարազատութեան մասին խօսոյթները մանիպուլացնելու միջոցներ: Պանթիւրքիզմի գաղափարախօսութիւնը ձեւաւորուել է այդ երկրորդ մտայնութեան, այսինքն՝ մեծապետական նպատակների միջնորդաւորուած հունաւորման ծիրում, ուստի մինչեւ թուրքական քաղաքականութեան անմիջական գործիքի վերածուելը՝ այն անցել է բաւականին բարդ եւ հակասական ուղի:

3. Պանթիւրքիզմի գաղափարախօսութեան ձեւաւորման վաղ շրջանում հանդէս եկած պանթիւրքական ուղղուածութիւն ունեցող առաջին տեսաբանները ռուսաստանցի թաթարներ էին՝ Ղրիմի թաթար Իսմայիլ բէյ

Գասպրինսկին եւ Կազանի թաթար Իւսուֆ Աղչուրան, որոնց կողմից որդեգրուած լուսաւորութեան տարածման եւ թիւրքական ժողովուրդների կեանքի չափաւոր աշխարհիկացման նպատակները համահունչ էին ցարական վարչակազմի ռուսականացման ծրագրերին: Կովկասեան թաթարների շրջանում ցարական իշխանութիւնների նման ձգտումներն աւելի առարկայական կերպարանք էին ստացել՝ վերջիններիս հին վերնախաւի իրանական մշակոյթի կրողը լինելու պատճառով: Ուստի նրանց նոր՝ լուսաւորեալ վերնախաւը (Հասան բէյ Զարդաբի (Մելիքով), Մուհամեդ աղա Շահթախթինսկի, Ունսիզադէ եղբայրներ եւ այլք) 1870-1890-ական թուականներին ցարական նահանգապետերի անմիջական աջակցութեամբ խօսակցական թուրքերէնով հրատարակուած «Էքինջի», «Քեշքիւլ» թերթերում եւ ռուսալեզու «Կովկաս» պաշտօնաթերթում աստիճանաբար ձեւակերպեց «ադրբեջանական թիւրք» եզրոյթը եւ ապա անցում կատարեց «ադրբեջանցի» հասկացութեանը՝ դրանով իսկ հիմք ստեղծելով «երկու Ադրբեջանների» գաղափարի առաջադրման եւ Իրանի հանդէպ տարածքային պահանջների համար:

4. Օսմանեան կայսրութիւնում երիտթուրքերի իշխանութեան շրջանում աստիճանաբար պետական գաղափարախօսութեան վերածուած պանթիւրքիզմի Իրան թափանցելու փորձերն ընթացել են ոչ թէ Ստամբուլ-Թաւրիզ, այլ Ստամբուլ-Բաքու-Թաւրիզ «երթուղով»: Իսկ ահա իրենց՝ երիտթուրքերի մօտ սկզբնական շրջանի պանթիւրքիզմը դրսեւորւում էր հպատակ ժողովուրդների թրքացման ծրագրի եւ Թուրանի մասին աղօտ երազանքի տեսքով եւ համակարգուած գաղափարախօսութեան վերածուեց միայն Առաջին աշխարհամարտի նախօրէին, հիմնականում՝ Զիյա Գէօքալփի տեսաբանական աշխատանքի շնորհիւ:

5. Թէեւ Ռուսական առաջին յեղափոխութեան շրջանում ծաւալուած հայ-թաթարական կռիւների մթնոլորտում կովկասեան թաթարների միջավայրում նկատուեց պանթիւրքական գաղափարների որոշակի աշխուժացում, բայց զուգահեռաբար Իրանում սկիզբ առած 1905-1912 թթ. Սահմանադրական յեղափոխութեան ժամանակ Ատրպատականի եւ մասնաւորապէս՝ Թաւրիզի թիւրքախօսները մնացին համահիրանական յեղափոխական պայքարի ծիրում: Անգամ՝ 1908-1909 թթ. Թաւրիզի ապստամբութեան օրերին նրանց ղեկավարներ Սաթթար ու Բաղըր խաները աւելի շատ վստահում էին քաղաքի պաշտպանութեան գործում լուրջ դերակատարութիւն ստանձնած դաշնակցական գործիչներին, քան իրենց պանթիւրքական գաղափարներ ներարկող տեղի թուրքական հիւպատոսին:

6. 1911-ին ձեւաւորուած «Մուսաւաթ» կուսակցութեան առաջին ծրագրում արձանագրուած 8 նպատակներից եւ ոչ մէկում պանթիւրքիզմի գաղափարների մասին խօսք անգամ չկար: Այնտեղ հիմնական շեշտը դրւում էր իսլամի ու իսլամական միասնութեան վրայ: Միայն 1917-ին, երբ տեղի

ունեցաւ պանթիւրքական ծրագրով առաջնորդուող թաթարական սոցիալ-ֆեդերալիստների միաւորումը «Մուսաւաթի» հետ, այդ կուսակցութիւնն արդէն հանդէս եկաւ պանթիւրքական ծրագրով: Նրա առաջնորդներն էին Մոհամմեդ Ամին Ռասուլզադէն, Նասիբ բէյ Ուսուբբեկովը, եւ ուրիշներ: Իսկ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետութեան հիմնադիր Մոհամմեդ Ամին Ռասուլզադէն 1923 թ. Ստամբուլում հրատարակած իր «Ադրբեջանի Հանրապետութիւն. ձեւաւորումը եւ ներկայիս իրավիճակը» աշխատութեան մէջ քաղաքական գետնի վրայ յստակօրէն առաջադրեց այսպէս կոչուած՝ «երկու Ադրբեջանների» միաւորման գաղափարը, քանզի նա այն համոզմունքին էր, որ Արաքսի երկու կողմերում ապրում է նոյն թուրք ժողովուրդը:

7. Ի հակադրութիւն Առաջին աշխարհամարտի շրջանում Ատրպատականում Թուրքիայի ծաւալած պանթիւրքական քարոզչութեան եւ քրիստոնեայ բնակչութեան ջարդերի միջոցով նրա էթնիկ կազմը փոխելու փորձերի, Իրանի Սահմանադրական յեղափոխութիւնից յետոյ երկրում բռնկուած շարժումների ընթացքում (Խիաբանիի շարժում, Ջանգալիի շարժում («Անտառականներ»), Խորասանի շարժում եւ այլն) ի յայտ եկան բարենորոգիչներ, ովքեր համոզուած էին, որ միայն կենտրոնացուած եւ ուժեղ պետութիւնն է կարող պահպանել Իրանի հողային ամբողջականութիւնը: Ուստի նրանք շեշտը դրեցին պարսկերէնի տարածման եւ այն թուրքերէն ու արաբերէն տարրերից մաքրելու խնդրի վրայ: Ասպարէզ նետուեց «մէկ ազգ, մէկ երկիր» գաղափարը: Պանթիւրքիզմին Իրանի՝ որպէս պետութեան հակազդեցութիւնը համակարգուած բնոյթ ստացաւ 1925 թ. դեկտեմբերին երկրի պատմութեան մէջ տեղի ունեցած նշանակալի իրադարձութեան՝ Ռեզա շահի գահակալութեան եւ Փեհլեւիների հարստութեան հաստատման արդիւնքում:

8. Թուրքիայի Հանրապետութեան ձեւաւորումից յետոյ այդ երկրում պանթիւրքիզմը քողարկուեց գիտական-ակադեմիական հետազոտութիւնների եւ առանձին ինտելեկտուալների գաղափարական որոնումների շղարշի տակ: Գերմանիայում ֆաշիստների իշխանութեան գալուց յետոյ՝ Թրակիայում կազմակերպուած մասնակի ջարդերի միջոցով պանթիւրքիստներին հակահրէական մանիպուլացիաների գործիք դարձրած թուրքական կառավարութիւնը Երկրորդ աշխարհամարտի սկզբնական հանգրուանում նոյնպէս խրախուսում էր այդ այսպէս կոչուած «նացիստ-թուրանիստների» գործունէութիւնը (Նիհալ Աթսիզ եւ ուրիշներ) ու սպասում էր Ստալինգրադի անկմանը՝ ԽՍՀՄ-ի վրայ յարձակուելու համար: Բայց ռազմաճակատում արձանագրուած շրջադարձից յետոյ՝ 1944-ից սկսած, հէնց նոյն պանթիւրքիստներին դատելու միջոցով Թուրքիայի կառավարութիւնը նրանց դարձրեց իր արտաքին քաղաքականութեան նոր՝ հակահիտլերեան շրջադարձը բեմականացնելու գործիքներ, որպէսզի Սառը պատերազմի սկզբնաւորման հետ միասին՝ նախկին «նացիստ-թուրանիստների» միջոցով

իրականացնի իր յաջորդ՝ հակախորհրդային շրջադարձը: 1947-ին Սառը պատերազմի սկզբնաւորման հետ միասին, Նիհալ Աթսիզը, Ալփարսլան Թիւրքէշը եւ գերմանական ֆաշիզմի միւս պանթիւրքիստ երկրպագուները արդարացուցին: Ալփարսլան Թիւրքէշը 1949-ին վերադարձաւ բանակային ծառայութեան եւ շուտով դարձաւ ՆԱՏՕ-ի հրամանատարութեան եւ Թուրքիայի Գլխաւոր շտաբի փոխգործակցութեան կազմակերպիչներից մէկը:

9. Ի տարբերութիւն Թուրքիայի՝ Իրանն արժանացաւ ֆաշիստական Գերմանիայի միանգամայն ինքնաբուխ աջակցութեանը, որտեղ 1936 թուականին ընդունուած հրամանով՝ իրանցիները ճանաչւում էին զտարիւն արիացիներ, իսկ զրադաշտականութեան խորհրդանիշ թեւաւոր խաչը՝ սուաստիկան, երկու երկրներին միաւորող խորհրդանիշ, բայց երբ այդ երկիր ներխուժեցին հարաւից՝ անգլիական եւ հիւսիսից՝ խորհրդային զօրքերը, մէկ շաբաթեայ դիմադրութիւնից յետոյ Իրանի կառավարութիւնը ընդունեց դաշնակիցների պայմանները:

10. Դեռեւս 1941-ին խորհրդային զօրքերի Իրան մուտք գործելուց յետոյ, բայց առաւել գործուն՝ 1944-ից սկսած, ԽՍՀՄ ղեկավարութիւնն սկսեց իր ծաւալապաշտական նպատակների համար օգտագործել Ատրպատականն՝ իր ազերի բնակչութեամբ: Մինչդեռ Խորհրդային Ադրբեջանի՝ բոլշեւիկեան շղարշով քողարկուած պանթիւրքիստ առաջնորդները՝ ոչ անյայտ Միր Ջաֆար Բաղիրովի գլխաւորութեամբ, խիստ ոգեւորուել էին «Հարաւային Ադրբեջանի ազատագրութեան» եւ «երկու Ադրբեջանների միաւորման» հեռանկարով: Բայց նրանց պանթիւրքական եւ պանազերիական յաւակնութիւններն ընդամէնը խաղալիք էին Մոսկուայի ձեռքին: 1945 թ. սեպտեմբերին Իրանի Համայնավարական (Կոմունիստական) կուսակցութեան անդամներից Սեյէդ Ջաֆար Փիշեւարիի միջոցով Թաւրիզում հիմնադրուեց «Ադրբեջանի Դեմոկրատական» կուսակցութիւնը: 1945 թ. նոյեմբերի 18-ին Ատրպատականում սկսուեց այդ կուսակցութեան գլխաւորած ապստամբութիւնը, որը 1945 թ. դեկտեմբերի 11-ին աւարտուեց յաղթանակով: Բայց շուտով Իրանի հմուտ վարչապետ Ահմադ Ղաւամը 1946 թ. ապրիլի 4-ին կարողացաւ կնքել Ղաւամ-Սադչիկով համաձայնագիրը, որով Իրանի հիւսիսում նաւթի արդիւնաբերութեան արտօնութիւնը տրուեց Խորհրդային Միութեանը, ուստի վերջինս իր ուժերը դուրս բերեց Իրանից: Իրանի վարչապետ Ղաւամը Ստալինից եւ Բերիայից աւելի խորամանկ գտնուեց եւ Իրանի նոր խորհրդարանը հետագայում չվաւերացրեց Իրանի հիւսիսի նաւթարդիւնաբերութեան վերաբերեալ Իրանի եւ Խորհրդային Միութեան միջեւ կնքուած պայմանագիրը:

11. 1960-ականների երկրորդ կէսին ակտիւացնելով իր ստեղծած «Հանրապետական գիւղացիական ազգային» կուսակցութեան գործունէութիւնը՝ 1969 թուականին Ադանայում կայացած համագումարում Ալփարսլան Թիւրքէշն այն վերածեց «Ազգայնական շարժում» կուսակցութեան, որն աւելի շատ յայտնի է իր մարտական կազմակերպութեան՝ «Գորշ գայլեր»

անուամբ: «Գորշ գայլերը» դարձան այն յարուածային ուժը, որի միջոցով Թուրքիայի հետախուզական ծառայութիւնն ու դիւանագիտութիւնը սկսեց ձեւաւորել հինգերորդ շարասիներ թիւրքախօս բնակչութիւն ունեցող երկրներում, այդ թւում՝ Իրանում եւ ապա՝ եւրոպական մայրցամաքում:

12. Իրանում 1979 թ. շահական վարչակարգի դէմ ուղղուած իսլամական յեղափոխութեանը գործուն կերպով մասնակցում էին Իրանի ազերիները: Սակայն երբ շահի փախուստից եւ Իսլամական յեղափոխութեան յաղթանակից յետոյ նրա ճանաչուած առաջնորդներից մէկի՝ այաթոլլաի Մոհամմադ Քազեմ Շարիաթմադարիի գլխաւորութեամբ Ատրպատականում սկիզբ առաւ երկրամասի համար ինքնավարութիւն պահանջող չափաւոր շարժում, իրավիճակը սկսեց փոխուել: Իսլամական յեղափոխութեան իդէալների հիմքը ո՛չ թէ էթնիկ, այլ կրօնական գործօնն էր, ուստի Շարիաթմադարին իր ստեղծած «Մուսուլմանական ժողովրդական» կուսակցութեամբ չէր կարող դիմակայել նման գերակայ միտումին: 1979 թ. դեկտեմբերի 7-ին Իրանի նոր՝ յեղափոխական կառավարութեան կարգադրութեամբ նրա տան վրայ յարձակում կազմակերպուեց, իսկ Թաւրիզում շարունակուող ցոյցերը ճնշուեցին: Շարիաթմադարիի կողմնակիցները գիտակցելով դիմադրութեան անհեռանկարայնութիւնը՝ դադարեցրին պայքարը:

13. Իրանի ազերիների պատմութիւնը եւ ինքնութիւնը հնարաւոր չէ պատկերացնել Իրանի մնացած հատուածի պատմութիւնից եւ ինքնութիւնից առանձին: Ինչպէս ուղղահայեաց (ժամանակային), այնպէս էլ հորիզոնական (համաժամանակեայ) նոյնականութեան բաղադրիչներով՝ պատմութիւն, աշխարհագրութիւն, կրօն եւ հաւատք, պաշտօնական եւ գրաւոր լեզու, քաղաքական ժառանգութիւն, տնտեսութիւն, պետական կառավարում, քաղաքական գործընթացներում ներգրաւուածութիւն՝ Իրանի ազերիները կրում են իրանական ինքնութեան բոլոր տարրերը:

14. Վերլուծելով պանթիւրքիզմի եւ պանազերիզմի էութիւնը եւ նրանց տարբերութիւններն ու ընդհանրութիւնները՝ յանգում ենք այն եզրակացութեանը, որ պանազերիզմի նպատակը Մեծ Ադրբեջանի ստեղծումն է: Ուստի, ոմանց կարծիքով, պանազերիզմը պանթիւրքիզմի իրանական նախագիծն է՝ մէկ հանգրուան դէպի մեծ կայսրութեան ստեղծում: Սակայն կարեւոր է ընդգծել, որ իրանական մտածողութիւն ունեցող գործիչների տեսանկիւնից պանազերիզմը, ընդհակառակը, Ադրբեջանի այսօրուայ Հանրապետութեան տարածքների, այլ խօսքով՝ Առանի ու Շիրուանի վերամիաւորումն է Իրանին: Իրանական մտածողութեան կրողները, յատկապէս Ատրպատականի ազերի մտաւորականները, բացայայտելով պանազերիզմի իրանական արմատները, այդ գաղափարական շարժումը հակադրում են պանթիւրքիզմի քողարկուած նպատակներին: Այդ պատճառով պանթիւրքիզմի եւ պանազերիզմի յարաբերակցութեան խնդիրը, բեկուելով

հակադիր քաղաքական նպատակների պրիզմայում, երկակի իմաստ ու նշանակութիւն է ստանում:

15. Իր առաջին նախագահ Մութալիբովից յետոյ Ադրբեջանի Հանրապետութիւնը բացայայտ կամ քողարկուած կերպով ձգտել եւ ձգտում է Մեծ Ադրբեջանի ստեղծմանը: Ադրբեջանում իսլամական գործօնը սահմանափակուել է ոչ միայն Թուրքիային ընդօրինակելու պատճառով, այլ կրօնական գործօնի հիմամբ՝ Իրանից եկող սպառնալիքը կանխելու նպատակով: Հակառակ այս երկու երկրների միջեւ առկայ բազմաթիւ ձգողական գործօններին, ինչպիսիք են՝ պատմական, մշակութային, կրօնական եւ էթնիկական ընդհանուր եզրերը, անցած շուրջ 30 տարիների ընթացքում նրանց միջեւ աւելի շատ խնդիրներ եւ անվստահութիւն գոյութիւն ունեն, քան անկեղծ ու սերտ գործակցութիւն: Կողմերի յարաբերութիւններում վանողական գործօններից են Իրանի ազերիախօս շրջանների նկատմամբ Ադրբեջանի Հանրապետութեան նկրտումները, Կասպից ծովի իրաւական ռեժիմի ճշգրտման հարցը, Արցախեան հիմնահարցը, Թուրքիայի Հանրապետութեան եւ Իսրայէլի ազդեցութիւնը Ադրբեջանի Հանրապետութիւնում եւ այլն: Վերոնշեալ վանողական գործօնները կապուած են Իրանի ազգային անվտանգութեան հետ, ուստի Իրանի ազերիախօս շրջանների հարցը լրջագոյն եւ ամենամեծ սպառնալիքն է Իրանի ազգային անվտանգութեան համար, որը յղի է Իրանի մասնատման վտանգով, ինչն իր հերթին մեծագոյն սպառնալիք է նաեւ Հայաստանի Հանրապետութեան համար:

16. Պանթիւրքական կազմակերպութիւնների լայն ցանցի ձեւաւորումը Իրանում եւ նրա շուրջ եւ նրանց մի մասի աշխուժ գործունէութեան ծաւալումը՝ Իրանի ներսում, հիմնականում կապուած է այն աշխարհաքաղաքական տեղաշարժերի ազդեցութեան հետ, որոնք սկիզբ առան ԽՍՀՄ-ի փլուզումից յետոյ: Իրանի ներսում այն հիմնականում դրսեւորւում է քարոզչութեան ծաւալմամբ եւ իրենց հետագայ գործունէութեան համար ենթահող պատրաստելով: Այդ կազմակերպութիւնների զգալի մասը, չունի կազմակերպական լայն ցանց եւ կառոյց, հիմնականում բաղկացած է սակաւաթիւ անդամներից: Ուստի նրանց մի մասի հիմնադիրները գլխաւորապէս զբաղուած են ժամանակակից էլեկտրոնային քարոզչութեան միջոցներով իրենց գաղափարները տարածելով: Սակայն նրանց շարքում կան նաեւ արտասահմանում ճիւղաւորուած ցանցեր ունեցող կառոյցներ, որոնք սերտօրէն կապուած են ո՛չ միայն Թուրքիայի ու Ադրբեջանի Հանրապետութիւնների պետական եւ քաղաքական կառոյցների, այլեւ եւրոպական երկրների, այսպէս ասած մարդու իրաւունքներով զբաղուող միջազգային կազմակերպութիւնների եւ անգամ՝ ՄԱԿ-ի հետ: Իրանի տարածքում նրանք գործում են հիմնականում Իրանի Ատրպատականում կազմակերպելով տարբեր քաղաքական գործողութիւններ: Գոյութիւն ունի

սերտ կապ ու գործողութիւնների համակարգում՝ այս «ներքին» ու «արտաքին» պանթիւրքիստների միջեւ:

17. «Հարաւային Ադրբեջանի Ազգային զարթօնքի շարժման» (ՀԱԱԶՇ-ի կամ՝ GAMOH-ի) պաշտօնական փաստաթղթերի եւ յայտարարութիւնների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ այն իր հիմնադիր Մահմուդ Ալի Չեհ-ռեգանիի առաջադրած Հարաւային Ադրբեջանի ինքնորոշման քաղաքական նպատակի եւ պանթիւրքիզմի ճանաչուած տեսաբան եւ գաղափարախօս Զիյա Գէօքալփի թուրքչուլիք, մոսէրչըլըք եւ օզգուռլիք (թուրքիզմ, արդիականութիւն, ազատութիւն) գաղափարաքաղաքական դրոյթների համադրութիւնն է: ՀԱԱԶՇ-ի ծրագիրը յստակեցնում է նաեւ Հարաւային Ադրբեջանի աշխարհագրական սահմանները՝ յաւակնելով ոչ միայն Իրանի Արեւելեան եւ Արեւմտեան Ատրպատական նահանգների տարածքին, այլեւ Արդեբիլ նահանգին՝ Անզալիով եւ Աստարայով ու յարակից գիւղերով ներառեալ, Զանջան նահանգին եւ անգամ՝ Համադան նահանգի թիւրքախօս բաժնին: Չեհռեգանին՝ ինքը չի կարողանում թաքցնել իր կազմակերպութեան վերջնանպատակը եւ արտաքուստ խօսելով ժողովրդավարութեան, Իրանում դաշնային համակարգի կիրառման եւ Իրանի հողային ամբողջականութեան մասին, վերջնական նպատակ է համարում ո՛չ միայն Հարաւային Ադրբեջանի անջատումը, այլեւ միացումը՝ Ադրբեջանի Հանրապետութեանը:

18. Ինչպէս ՀԱԱԶՇ-ը, այնպէս էլ միւս կազմակերպութիւնները («Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի նոր շարժում (YENIGAMOH)», «Հարաւային Ադրբեջանի անկախութիւն» կուսակցութիւն եւ այլն), իրանական հիմքի վրայ ձեւաւորուած պանթիւրքական ուժեր չեն, այլ պանթիւրքական գաղափարների արհեստական-մեխանիկական ներմուծողներ, ուստիեւ տեսաբանական առումով իրարից գրեթէ չեն տարբերւում:

19. Դեռ Արցախեան երկրորդ պատերազմը չսկսուած՝ Իրանում գործող պանթիւրքական կազմակերպութիւններն արդէն տեղեակ էին, որ պաշտօնական Բաքուն դիմելու է սադրանքների եւ հրադադարի խախտման մէջ նախապէս մեղադրելու է հայկական կողմին, որից յետոյ իբր՝ պատասխան գործողութիւններ, կամ՝ «հակայարձակում» է ձեռնարկելու Արցախի դէմ: Դա ցոյց է տալիս, որ անցած պատերազմում ո՛չ միայն Ադրբեջանն ու Թուրքիան, այլեւ Իրանը թիրախաւորած փաստօրէն բոլոր պանթիւրքական կազմակերպութիւնները, օրինակ՝ «Ադրբեջանի ուսանողական շարժումը» կամ «Ադրբեջանի ազգային դիմադրական կազմակերպութիւնը», եւ քարոզչամիջոցները, օրինակ՝ «Գունազ թի վին» գործում էին որպէս մէկ միասնական բանակ:

Ատենախօսութեան թեմայով հեղինակի գիտական հրապարակումները:

1. Shirvan, Aran And Azerbaijan: A Historical-Cultural Retrospective, International Conference, 1-2 November, 2013, Yerevan State University, Yerevan, Lecture, جریانات پان ترکیستی در ایران معاصر :
2. Պանթիւրքական հոսանքները ժամանակակից Իրանում, մենագրութիւն, հրատարակուել է ԵՊՀ Արեւելագիտութեան ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ, Երեւան, «Էդիթ Պրինտ», 2019, 184 էջ:
3. Պանթիւրքիզմ եւ պանազերիզմ: Համեմատական քննութիւն, «Վէմ» համահայկական հանդէս, ԺԲ (ԺԸ) տարի, թիւ 1 (69), յունուար-մարտ, 2020, Երեւան, էջ 233-246:
4. Իրանի ազերիների ինքնութեան հարցի շուրջ, «Վէմ» համահայկական հանդէս, ԺԲ (ԺԸ) տարի, թիւ 2 (70), ապրիլ-յունիս 2020, Երեւան, էջ 251-266:
5. Իրանա-Ադրբեջանական յարաբերութիւնները 1991–2021 թուականներին եւ Իրանի ազերիախօս շրջանների հարցը, «Վէմ» համահայկական հանդէս, ԺԲ (ԺԸ) տարի, թիւ 4 (72), հոկտեմբեր-դեկտեմբեր 2020, Երեւան, էջ 274-291:
6. Պանթիւրքական կազմակերպութիւնների գործունէութիւնն Իրանում 20-րդ դարի վերջերին – 21-րդ դարի սկզբներին, ԵՊՀ, «Պատմութիւն եւ մշակոյթ» հայագիտական հանդէս, թիւ 2, 2020, Երեւան, էջ 166-175:
7. Իրանում գործող պանթիւրքական կազմակերպութիւնների դերը ղարաբաղեան երկրորդ պատերազմում, Հայոց պատմութեան հարցեր, ՀՀ ԳԱԱ, պատմութեան ինստիտուտ, 2020, թիւ 21, էջ 151-171:

SARKIS MATEVOS MEGERDICHIAN

PAN-TURKISM AND IRAN
(HISTORY, IDEOLOGY, POLITICS)

The dissertation is submitted for the degree of the Doctor of Philosophy in the speciality 07.00.02-"World History". The defense of the dissertation will take place on March 30, 2023, at 14.30, at the meeting of the specialized council 069 "World History" at the Yerevan state university of the Republic of Armenia. Adress 0025, Yerevan, Abovyan str. 52.

Summary

The dissertation is dedicated to the study of the historical, ideological, geopolitical and modern-political aspects of the ideology of pan-Turkism that is a movement which is constantly targeting Iran (Imperial State of Persia, Imperial State of Iran, the Islamic Republic of Iran). The two main research objects of the current dissertation, pan-Turkism and Iran, are brought into the field of scientific research both through the study of the specific periods of the diachronic process of targeting Iran by pan-Turkism, as well as the ideological and political content of the synchronous processes unfolded in each of them.

Since the territorial integrity of Iran is one of the key conditions for ensuring the national security of the Republic of Armenia, the dissertation as a whole has a modern political significance, and the conclusions and rich information contained in it have important scientific and practical significance for the RA state bodies.

The dissertation aims to:

- To reveal, on the one hand, the characteristics of each stage of pan-Turkism as a political movement at each stage of its penetration into Iran, and the variety of political, economic and military tools used in them, and on the other hand, in order to neutralize their influence, not only Iran as a state, but also the forms and methods of resistance of the ethnic groups living in it, and first of all, the Turkic-speaking Azeris.
- To comprehensively study the content of a century-long discourse around Pan-Turkism, Pan-Azerism and Pan-Iranism perceptions of Iran as a unique civilization formed and crystallized on strong spiritual-cultural, economic, political and ideological foundations.
- To study the concrete political procedures of pan-Turkism's surprising flexibility in quickly catching the aggressive plans of foreign forces against Iran and using various geopolitical impulses to serve their own goals.

- To present the huge network of pan-Turkic organizations that was formed after the collapse of the USSR both around Iran (Turkey, Azerbaijan and Western countries) and inside Iran, mainly in Atropatekan (Azerbaijan of Iran).

The dissertation consists of an introduction, three chapters with corresponding sub-chapters, conclusions, a list of used literature, a list of abbreviations, a list of pan-Turkic organizations that has chosen Iran as a target.

In the introduction, the substantiation of the topic of the dissertation, its goals and objectives, and the thematic and chronological frameworks of the study, the applied scientific methods, the theory of sources and literature are presented.

In the first chapter, "The Formation of Pan-Turkism and the first attempts to penetrate Iran", starting with the definition of the term "Pan-Turkism" and a brief historical overview, the process of its formation in the territory of Tsarist Russia and the first attempts to cut the elite of the Caucasian Tatars from the Iranian cultural field and to make them a tool to penetrate Iran, which during the period of the Young Turks' rule were transferred to the Ottoman Empire and continued in the form of a new coordination of Pan-Turkic ideas.

Iran's reaction to pan-Turkic ambitions during the reign of Reza Shah is also presented, as well as the impact of German fascism's ideology on the formation of the pan-Turkic, new and more aggressive "Grey Wolves" movement, and on the other hand, the Soviet Union operating in the periphery of the expansionist programs of the Soviet Union is presented. The attempt of the "Liberation of Southern Azerbaijan" undertaken by the pan-Turkist leaders, disguised as a communist veil of Azerbaijan, in the mid-1940s and its failure.

In the second chapter, "Pant-Turkism in the combination of geopolitical ambitions directed against Iran (second half of the 20th century - beginning of the 21st century)" shows the vindication of the Pan-Turkist leaders labeled as "fascist-turanists" in Turkey at the end of the Second World War and the Western coup in 1947 in the context of the failure of the attempts of the "Nationalist Movement Party" founded in 1969 and its militant wing "Grey Wolves" to spread Pan-Turkic ideas in Iran. The identity of Iranians and particularly the Turkic speakers of Iran is also being examined, at the vertical and horizontal complementary levels and their interrelationships, which proves that the Azeris of Iran have Iranian roots and are Iranians. The relations between Iran and the Republic of Azerbaijan from 1991 to 2021 and the attractive and repulsive factors between the two countries are also presented.

The third chapter, "Formation and activity of anti-Turkic organizations in Iran and its surroundings (1991--2021)" is the most important chapter of the dissertation, it consists of eight sub-chapters. It presents the general characteristics of Pan-Turkic organizations of Iranian origin, the plans, statutes,

official statements and thoughts of their leaders, the forms and methods of the international and overt activities of Pan-Turkic organizations operating in Iran, the activities of these organizations, from the organizing of conferences to the political activities in the sporting events, etc. The hostile steps of the pan-Turkic organizations operating in Iran towards the Republic of Armenia, Artsakh and Armenians and their activities during the 44-day Artsakh war are also revealed.

The conclusion sums up the results of the research carried out in the framework of the study.

МКРТЧЯН САРКИС МАТЕВОСОВИЧ

ПАНТЮРКИЗМ И ИРАН (ИСТОРИЯ, ИДЕОЛОГИЯ, ПОЛИТИКА)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история». Защита диссертации состоится 30 марта 2023 г. в 14.30 на заседании специализированного совета 069 «Всемирная история» ВАК РА, действующего при Историческом факультете ЕГУ, по адресу 0025 Ереван, ул. Абовяна 52.

Резюме

Диссертация посвящена анализу исторических, идеологических, геополитических и актуально-политических аспектов направленной против Ирана деятельности пантюркизма как политического движения и идеологии. Исследование двух объектов диссертационной работы – пантюркизма и Ирана (Шахская Персия, Шахский Иран, Исламская Республика Иран) – осуществляется как на диахронической плоскости поэтапного проникновения пантюркизма в Иран, так и изучением идеологического и политического содержания тех синхронных процессов, которые происходили в каждом из рассматриваемых периодов.

Поскольку территориальная целостность Ирана является одним из ключевых условий обеспечения национальной безопасности Республики Армения, диссертация имеет актуально-политическое значение, а полученные выводы и богатая информация имеют важное научно-практическое и прикладное значение для государственных органов РА.

Цель диссертационного исследования –

- выявить, с одной стороны, особенности каждого этапа проникновения пантюркизма в Иран и рассмотреть многообразие политических, экономических и военных инструментов, применяемых для достижения этой цели, а с другой стороны, изучить формы противодействия иранского государства и проживающих в нем этнических групп, в первую очередь тюркоязычных азери, политике и идеологии пантюркизма;

- провести всестороннее изучение богатого содержания дискурса вокруг пантюркистских, паназерийских и панираннских представлений об Иране как уникальной цивилизации, возникшей и затем сформировавшейся на прочных духовно-культурных, экономических, политических и идеологических основах;

- изучить конкретные политические инструменты, которые с невероятной гибкостью применяются пантюркизмом для быстрого обнаружения направленных против Ирана геополитические импульсов, и механизмы их умения использовать различные программные задачи действующих против Ирана сил в своих целях;

- выявить сеть пантюркистских организаций, образовавшихся после распада СССР в странах, соседствующих с Ираном (Турция, Азербайджан), а также в западных странах, и внутри Ирана, в основном в Антропатене.

Работа состоит из введения, трех глав, разделенных на соответствующие подглавы, заключения, списка использованной литературы, списка сокращений, именного указателя пантюркистских организаций, деятельность которых направлена против Ирана.

Во **введении** обосновываются выбор темы диссертационного исследования, его актуальность, формулируются цели и задачи исследования, его тематические и временные рамки, описываются использованные научные методы, проводится обзор источников и литературы.

В **Первой главе – «Формирование пантюркизма и первые попытки его проникновения в Иран»** – приводится определение термина «пантюркизм», дается краткий очерк истории проникновения тюркских племен в Иран, рассматривается процесс формирования пантюркизма на территории царской России, изучаются первые попытки «отрезать» элиту кавказских татар от иранского культурного поля для того, чтобы сделать ее инструментом поглощения Ирана. Эти попытки в период правления младотурков были перенесены в Османскую империю и продолжены в виде новой трактовки пантюркистских идей. Также представлено противодействие Ирана пантюркистским амбициям в период правления Реза Шаха, показаны, с одной стороны, влияние идеологии германского фашизма на формирование нового, более агрессивного пантюркистского движения «Серые волки», а с другой стороны, представлены попытки захвата «Южного Азербайджана»,

предпринятые в середине 1940-х гг. пантюркистскими лидерами Советского Азербайджана, действовавшими в фарватере экспансионистских программ Советского Союза - слегка замаскированных коммунистической идеологией.

Во **Второй главе – «Пантюркизм в аспекте геополитических амбиций, направленных против Ирана (вторая половина XX - начало XXI вв.)»** – показана реабилитация в 1947 г. пантюркистских лидеров в Турции, заклейменных после Второй мировой войны как «фашисты-туранисты», а также провальные попытки распространения пантюркистских идей в Иране в контексте деятельности основанной в 1969 г. «Партии националистического движения» и ее боевого крыла – организации «Серые волки». Проводится анализ идентичности иранцев и особенно тюркоязычных жителей Ирана на вертикальном и горизонтальном срезах, рассматриваются их взаимоотношения с другими народами этой страны, что свидетельствует о том, что азери Ирана имеют иранские корни и являются иранцами. Изучаются взаимоотношения Ирана и независимой Азербайджанской Республики в период от 1991 г. до 2021 г.

Третья глава – «Формирование пантюркистских организаций и их деятельность в Иране и в соседних странах (1991-2021 гг.)» – является наиболее важной и обширной главой диссертации. Глава состоит из восьми подглав, в которых представлены общая характеристика пантюркистских организаций Ирана, программы каждой из них, формы и способы их подпольной и легальной деятельности, официальные заявления и мысли их руководителей, особенности деятельности этих организаций, начиная с конференций и завершая политической пропагандой, осуществляемой во время спортивных мероприятий, и т.д.

Выявляются также вражеские шаги действующих в Иране пантюркистских организаций против Республики Армения, Арцаха и армянства в целом, и их активная деятельность во время 44-дневной Арцахской войны.

В **Заключении** обобщены результаты проведенного диссертационного исследования.